Է. ՏԱՐԻ 1861 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 19 ԱՐԵԳ 4382 — Հ. Տ. 27 ՄԱՐՏ 1890 — Ն. Տ. 8 ԱՊՐԻԼ 1890 — ՀԻՃՐ. 18 ՇԱՊԱՆ 1307 ԵՐԵՔՇԱԲԹԻ

20 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿ ԵՒ [illegible] ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
[illegible] ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌ولك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար [illegible]	160
» » [illegible] » »	80
» » [illegible] » »	40
Գաւառաց » Տարեկան » »	200
» » [illegible] »	100
Օտար երկիրներու տարեկան ֆրանք	56
» » վեցամսեայ »	28

[illegible]

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 27 ՄԱՐՏ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ Յ'ԱՓՐԻԿԷ

ԷՄԻՆ ՓԱՇԱՅԻ ՆՈՐ ՊԱՇՏՕՆԸ

Պիսմարք իշխանի հրաժարականն ընդունելով Վիլհէլմ կայսեր առաջին գործն է նոր զարկ մը տալ Գերմանիոյ գաղթային ձեռնարկութեան։ Պիսմարք իշխան չէր ուզեր չափէն աւելի յառաջ երթալ այս ուղղութեամբ, նախամեծար դասելով Գերմանիոյ ոյժերն յարաժամ տրամադրելի պահել Եւրոպիոյ մէջ։ Հազարապետ Վիսման, Գերմանիոյ կայսեր ներկայացուցիչն յԱրեւելեան Ափրիկէ, յաջողեցաւ համոզել Էմին փաշան Գերմանիոյ գաղթային ծառայութեան մէջ մտնելու։ Թէ՛ Անգլիացիք և թէ Գերմանք կը ջանային իրենց կողմը շահիլ Էմին փաշան։ Քանի մը ամիս վարանմամբ մնալէ ետք, Էմին փաշա Գերմանաց յարեցաւ։ Տարօրինակ կը թուի սոյն որոշում, որովհետեւ Անգլիացիներն էին Էմին փաշան ազատող։ Պ. Սթէնլի Էմին փաշան իշխանութենէ և նիւթական զօրութենէ զրկուած և իւր եգիպտացի ըմբոստ սպայից ձեռք գերի ինկած գտաւ, և ժամանակի եւ դրամի մեծամեծ զոհողութեամբք, ազատեց և ծովեզերք բերաւ զնա։ Բայց ո՛վ է կերպիւ Էմին փաշա երախտագէտ չմնաց։ Զուղեց վերադառնալ յԵւրոպա, ուր իւր ազատչին՝ Պ. Սթէնլիի փառաւորումը պիտի տեսնէր, թէեւ ինքն ալ անշուշտ պիտի փառաւորուէր։ Իւր ծանր արկածն ի Պակամոյօ, ուր մազապուր զերծաւ մահուան կամ խեղագարութեան վըտանգէն, աւելի դառնացուց զինք, և այժմ բոլորովին Անգլիոյ դէմ կը դառնայ. զի իւր պաշտօնն է երթալ դէպ յիւր նախկին կառավարչական երկիրն, Հասարակածային Ափրիկէ, Ալպէրթ Նիանզայի և Վիքթորիա Նիանզայի ծովածաւալ լճերուն երկիրը, տեղացի բնիկ իշխանները մէկիկ մէկիկ գերմանական հովանաւորութեան կամ հպատակութեան ներքեւ առնելու պաշտօնով։ Հազարապետ Վիսման տարեկան հազար անգլ. ոսկի թոշակ յատկացուցած է Էմին փաշային, որ Արեւելեան Ափրիկէի գերմանական ընկերութեան գըլխաւոր պաշտօնակալը պիտի լինի Ափրիկէի ներսերն, և իւր տրամադրութեան ներքեւ գերման սպայից հրամատարութեամբ 800 Սուտանցի զօրաց գունդ մը պիտի ունենայ, որ ամենայն փութաջանութեամբ կազմակերպուած է։ Քիչ օրէն Էմին փաշա ստուար կարաւանով մը ճամբայ կ'ելնէ, վերադառնալու համար իւր նախկին շահատակութեանց վայրը։ Գերմանք կ'աճապարեն։ Թէեւ եղանակն յարմար չէ Ափրիկէի ներսերն ուղեւորելու, որովհետեւ օդերը սաստիկ տաքնալու վրայ են հոն, բայց Գերմանք չեն ուզեր ժամանակ կորուսանել, որպէս զի Անգլիացիք իրենցմէ յառաջ չանցնին։ Անգլիացիք եւս, ինչպէս յայտնի է, Արեւելեան Ափրիկէի ընկերութիւն մ'ունին, որ երկրին ներսերն հետզհետէ կարեւոր գրաւումներ կ'ընէ, իբրեւ ապագայ ասպարէզներ անգլիական շահագործութեան։ Գերմանք, Անգլիացիք, Իտալացիք, և մինչեւ մէկ ատեն ալ Ֆրանսացիք, գուշակելով թէ ժամանակ մը ետքն այժմեան հրապարակները նեղ պիտի գան եւրոպական ճարտարութեան, հնար եղածին չափ ընդարձակագոյն երկիրներ իրենց ուղղակի կամ անուղղակի իշխանութեան ներքեւ առնել կ'աշխատին, իբրեւ ասպարէզ ապագայ՝ սերնդոց տնտեսական գործունէութեան։ Ափրիկէի ծովեզերաց և ներքին անծանօթ կամ կիսովին ծանօթ երկրաց մեծագոյն մասն Անգլիացիք իրենց ձեռքն անցուցած էին, բայց այժմ Անգլիոյ դէմ կը մրցի Գերմանիա, որ եթէ յաջողի Էմին փաշայի երբեմն կառավարած նահանգներն ևս իւր իշխանութեան կամ գէթ ազդեցութեան շրջանակին մէջ առնուլ, բովանդակ Գերմանիոյ քանի մը պատիկ ընդարձակութեամբ երկիրներ կուգան կը միանան գերման կայսրութեան հետ։

Անգլիացիք բնականապէս տհաճութեամբ կը տեսնեն Էմին փաշայի ընթացքն։ Իւր երեսը կը զարնեն իւր ապերախտութիւն։ Իւր վարանումները կը ծաղրեն։ Եւ անգլիական գաղթային ընկերութեան յորդոր կը կարդան առանց ժամանակ կորուսանելու դիմադրաւել գերմանական յանկարծակի յառաջխաղացութեան, բրիտանեան ազդեցութիւնը վերջնապէս հաստատելու համար այնպիսի երկրաց վրայ որք՝ Պ. Սթէնլիի յանդգնութեան և քաջագործութեան շնորհիւ՝ անգլիական գործունէութեան ասպարէզ լինելու սահմանուած կը համարուէին։ Կ'երեւի թէ մօտ ժամանակներս աշխարհ հանդիսատես պիտի լինի Ափրիկէի արեւելեան ծովեզերաց վրայ գերմանական և անգլիական մրցման մը, որ այս երկու ազգերուն ալ կորովի եւ հաստատամիտ բնաւորութիւնն ի նկատ առնլով, հետաքրքրաշարժ տեսարան մը լինել կը խոստանայ։

* * *

Գերմանք ուրիշ բան մ'ալ կ'ընեն։

Մեր ընթերցողաց ծանօթ է Թիփու-Թիփ, արաբ կարաւանապետն, որ Ափրիկէի ներսերն ահ և սարսափ ձըգած է, քանի որ գերեաց վաճառականութիւն կ'ընէր, և գերի ճարելու համար մարդորսաց վայրագ բանակի մը գլուխն անցած, բնիկ սեւամորթներու գիւղերուն վրայ կը յարձակէր, այրեր, կիներ և տղայք կը գրաւէր տաներ ու կը ծախէր։ Այս վնասակար մարդուն մեծ ազդեցութիւնը քաղաքակրթական գործի մը ծառայեցնելու յուսով, Արեւելեան Ափրիկէի անգլիական ընկերութիւնը, Պ. Սթէնլիի խորհրդով, պայմանադրութեամբ մտաւ Թիփու-Թիփի հետ, մեծ գումար մը վճարեց անոր իբրեւ տարեկան թոշակ, որպէս զի օգնէ Պ. Սթէնլիի ձեռնարկին՝ բնիկ բեռնակիրներ և պաշար հայթայթելով։ Թիփու-Թիփ հաւանեցաւ այս փայլուն առաջարկութեանց։ Քոնկոյի վերերն հաստատեցաւ, և ժամանակ մը սատարեց Պ. Սթէնլիի։ Բայց երբ սա մխեցաւ հեռացաւ ափրիկեան մթին և սեւ անտառներուն մէջ, Թիփու-Թիփ իւր հնարքն յառաջ տարաւ, և ուղղապէս կամ անուղղապէս պատճառ եղաւ Պարթլոթ անգլ. հազարապետի վերջապահ կարաւանին կողոպտուելուն ու փճանալուն և հազարապետին ալ իւր եւրոպացի ընկերաց հետ ջարդուելուն։

Պ. Սթէնլի ինք բարեբախտաբար զերծ մնաց Թիփու-Թիփի մտադրած նորանոր չարիքներէն, և ողջամբ Զանզիպար հասնելուն պէս, իւր առաջին գործն եղաւ եղելութիւնն իմացնել անգլիական ընկերութեան, որ Զանզիպարի անգլիական հիւպատոսական դատարանին առջեւ դատ բացաւ Թիփու-Թիփի դէմ, 10,000 անգլ. ոսկի դրամական հատուցում պահանջելով, որովհետեւ իւր նիւթական յանձնառութիւնները չէր կատարած, և ապագային վերապահելով նորա պատժումը խնդրել իւր չարամիտ դաւադրութեանց համար։

Արդ, Էմին փաշա, անցեալ շաբթուն մէջ, բոլոր Զանզիպարցիներն յապուշ կրթեց՝ առտուն կանուխ արաբ ցրուիչներու ձեռամբ յայտարարութիւն մը տարածելով Զանզիպարի փողոցներուն մէջ, որով թէ՛ արաբերէն և թէ եւրոպեան լեզուներով կը յայտարարէ թէ ինք Թիփու-Թիփի դէմ դատ չունի, և այսպիսի դատ մը բանալու մասին համամիտ չէ գտնուած Պ. Սթէնլիի։ Էմին փաշայի անունը չէր յիշուած դատաստանին մէջ, բայց այս յայտարարութեամբ Էմին փաշա կ'ուզէ սիրաշահիլ թէ՛ զԹիփու-Թիփ և թէ անոր համակրող Արաբներն, եւ միանգամայն իւր հակառակութիւնը կը ցուցնէ Պ. Սթէնլիի դէմ։

Միւս կողմէ, հազարապետ Վիսման բանակցութեան մտաւ Թիփու-Թիփի հետ՝ զայն եւս Գերմանիոյ ծառայութեան մէջ մտցնելու համար։

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ՊԻՍՄԱՐՔԵԱՆ ԱՐԱՐՔ ԵՒ ԶՐՈՅՑՔ

Գերմանական և այլ եւրոպեան լրագիրք լի են գերման ժողովրդեան կողմէ Պիսմարք իշխանին ընծայուած համակրանաց ցոյցերուն նկարագրութեամբք և անոնց վրայ խորհրդածութեամբք։

Հրաժարեալ նախարարապետին ծննդեան 76րդ տարեդարձը թեւակոխելուն առթիւ, 4,000 անձինք ի Ֆրիտրիխսրուհ երթալով այցելուաց տումարին մէջ ստորագրեցին։ Նոյն օրը մինչեւ երեկոյ եկան 312 ծրարներ զանազան ընծաներով, 106 նամակներ արժէքաւոր նիւթերով, և 4,000 հեռագիրներ։ Ֆրիտրիխսրուհի հեռագրատան պաշտօնեայք չէին հասներ, թէեւ անոնց թուոյն վրայ յաւելում եղած էր այս առթիւ, և մինչեւ կէս գիշեր 1,000ի չափ հեռագիրներ կը մնային Համպուրկի հեռագրատան մէջ Պիսմարք իշխանին ուղղեալ։ Կայսրն իւր իւղաներկ կենդանագիրն և ծխափող մը ղրկեց խնդակցական գրով մը։

—Պիսմարք իշխան ըսեր է. «Կայսրն հետաքրքրաշարժ փոփոխութիւն մ'ըրաւ. իւր լաւագոյն զօրավարը նախարարապետ ըրաւ, և իւր նախարարապետը՝ զօրավար»։

—Թայմզի գերմանասէր թղթակիցն, որ ֆրանսացի խմբագրերուն և թըղթակիցներուն պէս գերմանական գործերն աննպաստ գոյներով նկարագրելու փափաք չունի բնաւ, կ'արձանագրէ նոր պատմութիւն մը, որ կայսեր և Պիսմարք իշխանի գժտութեան սաստկութիւնը կը ցուցնէ.—Կայսեր և իշխանին հրաժեշտի տեսակցութիւնը շատ կարճ եղեր է, և փոխանակ համբոյրներ փոխանակելու, ինչպէս գերման լրագիրք ոմանք ծանուցին յանժամ, աւելի կամ նուազ թթու դիտողութիւններ փոխանակեր են ամենայն քաղաքավարութեամբ։ Պիսմարք իշխան բացարձակ մերժեր է Լաւենպուրկի դքսութեան տիտղոսը, բայց կայսրն ալ պատասխաներ է թէ շնորհ մ'ընելու համար իւր հրաժարեալ նախարարապետին խորհուրդ հարցնելու պէտք չունէր, և բաց աստի, կայսերական շնորհ մը անդառնալի է։ Ի վերջոյ, որոշուեր է որ Պիսմարք դքսական աստիճան ունենայ, բայց իւր պատմական անուամբ յիշուի յետ այսօրիկ եւս։ Կայսերական պաշտօնական Օրագիրն իւր ապրիլ 2ի թուով Պիսմարք իշխանի անունը կը յիշէ ո՛չ թէ իբրեւ Herzog von Lauenbourg այլ ըստ առաջնոյն իբրեւ Fürst von Bismarck։ Ուրեմն, կ'եզրակացնէ Թայմզի թղթակիցը, դքսական նոր տիտղոսը Պիսմարք իշխանին տրուած է միայն չգործածուելու կամ անտես առնուելու համար։ —Պիսմարք մտերմաբար ըսեր է թէ «Նոր տիտղոսս պէտք կրնամ՝ ունենալ միայն ծպտեալ ուղեւորութիւններ ընելու համար»։

—Գերման լրագիրք ոմանք, հաստատելով թէ Պիսմարք ակամայ հրաժարեցաւ, կը պատմեն թէ Պիսմարք նորակազմ Ռայխսթակի գէթ առաջին տարեշրջանի միջոցին իւր պաշտօնը շարունակել կ'ուզէր, նորընտիր երեսփոխաններուն ուղղութիւն տալու փափաքով։ Բայց իրեն նկատմամբ կայսեր պաղութիւնը չտեսնել անհնար էր։ Օր մը, չի կրնար ինքզինք զսպել, և կ'ըսէ. «Արդեօք նեղութի՞ւն կը պատճառեմ Ձեր Վեհափառութեան»։ Կայսրն ո՛չ միայն չի բողոքեր այս խօսքին դէմ, այլ անորոշ պատասխան մը տալ բաւ կը համարի։ Ցայնժամ Պիսմարք կ'առաջարկէ քաշուիլ ամեն պաշտօններէ որք ներքին գործոց վրայ անմիջական ազդեցութիւն մի կուտան իրեն, բայց կ'ուզէ վերապահել արտաքին գործոց ուղղութիւնն, և այս մտօք նախ կը թողու առեւտրական և արհեստական գործոց նախարարի պաշտօնը, զոր կայսրն երիտասարդ Պ. ֆոն Պէրլէփշի կուտայ։ Պիսմարք շատ չանցած կը տեսնէ որ այսչափ զոհողութեամբ մը չպիտի գոհանայ կայսրն։ —Իւր ակամայ մեկնիլը Պիսմարք կը հաստատէ, Տրէզտէնի քաղաքացւոց պատգամաւորութեան ըսելով. «Իմ ձեռքս չէր աւելի երկար ժամանակ շարունակել պաշտօնս»։

—Ֆրետերիկ կայսրուհւոյն յաղթութիւնը կատարեալ կը թուի։ Վիլհէլմ Բ. իւր մօր հետ հաշտուեր է բոլորովին, և հիմակ անոր իմաստուն խորհուրդներէն օգուտ կը քաղէ եղեր։ Իսկ երկաթեայ նախարարապետն, որ Ֆրետերիկ կայսեր կարճատեւ գահակալութեան իշխանութիւնն աւելի եւս կը դառնացնէր՝ կառավարական լրագրաց մէջ գրել տալով Keine Frauenzimmer Politik! [illegible], կը խոստովանի թէ մահկանացուաց հզօրագոյնք իսկ կրնան իյնալ։

—Կոմս Հէրպէրթ Պիսմարք ի մօտոյ պիտի ամուսնանայ Էլիզապէթ ֆոն Հացֆէլտ կոմսուհւոյն հետ, արձակեալ կին Քարլ ֆոն Քարոլաթ Պէօյթէն իշխանին, որ 1881ին ամուսնալուծութեամբ բաժնուեցաւ իւր կնոջմէն, յիտալիա ուղեւորութեան մը հետեւանօք, յորում տիկնոջ ընկերակցած էր կոմս Հէրպէրթ։ Պիսմարք իշխանի որդին 1849ին ծնած է, որով 41 տարեկան է, իսկ Էլիզապէթ կոմսուհին՝ 1839ին, այսինքն 51 տարեկան։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Օրլէանու դքսին բանտը, Քլէրվօ, ժամադրավայր է տակաւին ֆրանսական բարձր դասու ազնուականութեան։ Բայց Աւագ Հինգշաբթի և Աւագ Ուրբաթ օրերն, երիտասարդ դուքսը, բարեպաշտական պարտաւորութեամբք պարապեալ, մարդ չընդունեց բնաւ։

—Շանփինեիի մօտերը ֆրանսական զօրքերն անծուխ վառօդով փորձեր ըրին։ Անծուխ վառօդին գործածման նպատակն է բանակի մը շարժումները ծածկել թշնամւոյն տեսութենէն, եւ զօրապետաց դիւրութիւն տալ իրենց զօրաց շարժումներն ուղղելու։ Ֆրանսացի զօրապետք դիտեցին թէ զօրաց շարժումներուն յառաջ բերած թանձր փոշին կը մթագնէ օդն, և խոնաւ գետնի վրայ ճակատամարտ մը չոր գետնի վրայ ճակատամարտէ մը տարբեր արդիւնք կարող է տալ։ Ամբողջ բանակներ լաւ եւս ծպտելու համար, ֆրանսացի զօրավարք կ'առաջարկեն բառնալ փայլուն համազգեստներն, որք ի բացակայութեան ծուխի՝ կրնան թշնամւոյն ուշը դրաւել, և թէ՛ հագուստները, թէ ռազմամթերաց սնտուկները, սայլերն և սուինները գորշ կամ փոշւոյ գոյն ներկել, որպէս զի թշնամին նշանակէտ չունենայ հեռուստ։ Բանաստեղծք և նկարիչք, որք սուիններուն և նիզակներուն փայլն ու շողը կը նկարագրէին և կարմիր, կապոյտ կամ կանաչ ոսկեհուռ համազգեստներու փոփոխումը, պարտին այսուհետեւ իրենց լեզուն փոխել, և նկարագրել մարդկան ստուար կոյտեր որք զիրար ջարդել կը նային առանց աղմուկի, առանց մուխի եւ ծուխի։ Այս կերպ պատերազմ աւելի պիտի նմանի թակարթի քան համարձակ ճակատամարտի, և քաղաքակրթութեան կարծեցեալ յառաջդիմութիւնը բարբարոսութեան յառաջդիմութիւն մը պիտի դառնայ ի վերջոյ։

—Երեք պուլանժէական Ֆրանսացւոց ի Կ. Պոլիս այցելութիւնը չէ մոռցուած։ Անոնցմէ մին, Պ. Թէոտոր Քահիւ, Ֆիկարոյի մէջ յօդուած մը հրատարակելով, ի մէջ այլոց կը գովէ Վեհ. Սուլթան Ապտ-իւլ-Համիտ կայսեր իմաստուն քաղաքագիտութիւնն, որ Արեւելից կողմը խաղաղութեան պահպանման հզօրագոյն երաշխաւորութիւնն է։ Կ'ըսէ թէ Ֆրանսա, մասնաւոր դիտումներ չունենալով, կարող է աւելի մեծ ազդեցութիւն ձեռք բերել ի Կ. Պոլիս։ Ի վերջոյ, գովեստիւ կը խօսի Տատեան Վսեմ. Յարութիւն փաշայի վրայ, որուն չափ Եւրոպիոյ քաղաքական վիճակը քաջ գիտցող պետական մարդիկ խիստ քիչ են, կ'ըսէ։

—Փարիզի քաղաքապետութիւնն որոշեց որ կառքերն այսուհետեւ իրենց կատարած ուղեւորութեանց համար քիլոմէթրի հաշուով վարձք ընդունին, և ամեն կառքի մէջ գործի մը դրուի որ քանի քիլոմէթր ճամբայ առնուլը ցոյց տայ։ Առաջին քիլոմէթրին վարձքն է 75 սանդիմ, և անկէ աւելի ամեն քիլոմէթրի համար 25 ական սանթիմ։

ՊՈՒԼՂԱՐԵԱՆ ԴԷՊՔԵՐ

Պուլկար կառավարութիւնը, վախնալով թէ Սերպիա, Ռուսիոյ դրդմամբ, պատերազմ պիտի հրատարակէ, սովորականէն աւելի գին մը վճարեց աւստրեան Ռոթ ընկերութեան՝ ըստ կարի շուտ 40 միլիոն փամփուշտ յանձնելու համար Պուլկարիոյ։ Պուլկար բանակն Աւստրիոյ Մանլիխերեան բազմհարուածեան հրացանով կը զինուի, և խոշոր 280 թնդանօթներ ունի, որք Սերպիոյ գործածած թնդանօթներէն գերազանց են ամեն կերպիւ։ Պուլկարիա կարող է եօթանասուն հինգ հազար զօրք շուտով ասպարէզ հանել, և դրամապէս լաւագոյն դիրք ունի, քանի որ Սոֆիայի Ազգային Դրամատան մէջ 12 միլիոն ֆր.ի պահեստ մը կայ իշխանապետութեան հաշուոյն։ Բայց Պուլկարիա սպայից կողմէ տկար է։ Զօրավար չունի, և իւր գնդապետներէն և հազարապետներէն ո՛չ ոք, բաց ի Նիքոլայեւէ, պատերազմի դաշտին վրայ զօրաց հրամայելու պատեհութիւն չէ ունեցած։ Իսկ Սերպիա քանի մը փորձ և կարող զօրապետներ ունի, որպէս Լեշանին, Հորվաթովից, Փրոթից և Թօփալովից։

ԳԵՐՄԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Պ. Ճօրճ Փէք, Գերման, քաղաքապետ ընտրեցաւ Միլվօքիի, ի Միացեալ Նահանգս։ Այս ընտրութիւն կը նշանակէ օտար տարրին յաղթութիւնը բնիկ ամերիկացի տարրին վրայ։

—)(117)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՄԱՌԻ

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԴՐԱԽՏ

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

Եւ աչուըները մոլորուն, խօլական շարժումներով, հալածման տագնապներէն բռնուած,—այն տեսակ մը յիմարութիւնն որ երեւան ելած էր յինքեան՝ Մարէշքոյի մեկնումէն ի վեր...,—դէմքը ձեռուըներուն մէջ ծածկեց։

—Ամէ՛ն մարդ, գոչեց։ Հո՛ն են, խումբ խումբ, անտառներուն մէջ ուր կ'սպասեն իմ ջաղացքէն դուրս ելլելու վայրկենիս։ Չորս կողմս կը վազեն ու չեն թողուր զիս։ Բայց ես պիտի պաշտպանեմ ինքզինքս։ Չպիտի խօսիմ։ Բան մը չպիտի իմանան։ Ո՛չ, բան մը չպիտի իմանան։

Ռընօտիէռ սաստիկ գունատ, սաստիկ զարհուրած այս ջղային գրգռումէն, անձայն կը դիտէր Լա Հէօյն։

—Եթէ այս վիճակին մէջ մնայ, յիմարութիւն մը պիտի գործէ. այն ատեն ես կորսուած եմ, մտածեց։

Ցանկարծ Լա Հէօյն բժշկին վրայ կը յարձակի, անոր ուսերը կը սեղմէ ու ցած ձայնով կ'ըսէ ականջէն.

—Քեզի չըսի՞... դրանը մօտ կեցած են ու կը փորձեն մտիկ ընել մեր խօսակցութիւնը։

—Ինքզինքդ եկո՛ւր, Մառի, կ'ըսէր Ռընօտիէռ, այդ տեսակ գաղափարները վանելու է։ Մարդ չկայ։

—Ես քեզի կ'ըսեմ թէ մէկը կայ... անոր ձայնը լսեցի պատուհանին գոցուած փեղկերուն ետեւէն։

—Եկո՛ւր... քեզի ցոյց պիտի տամ թէ կը սխալիս։

Ռընօտիէռ դէպ ի դուռն յառաջացաւ։ Լա Հէօյն կը դիմադրէր։

—Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր։ Բան մը չպիտի իմանան։ Պարապ տեղը պիտի աշխատին։

Ռընօտիէռ կիսովին բացաւ դուռը։

Եւ տարօրինա՛կ բան, ճիշդ այդ վայրկենին կարծեց նշմարել մարդու մը ստուերն որ մէկ ոստումով նեղ ճանբէն անցնելով, անտառը կը մտնէր։

—Զարմա՛նք, ըսաւ տօքթորը։ Արդեօք իրա՞ւ է։

Դէպ ի անտառը վազեց և հոն մտաւ։ Խաւար գիշեր էր։ Անհնար էր բան մը նշմարել։

Ականջ դրաւ։ Եւ որոշ կերպիւ լսեց չոր ոստերուն մէջէն ու տերեւներուն վըրայ կոխոտելով փախչող մարդու մը ոտնաձայնը։

Ետեւէն վազել, անոր հասնիլն, անկարելի էր։

Ռընօտիէռ յոնքերը պռստեց։ Սիրտն աւելի ուժգին կը բաբախէր։

Ապահովուած չէր։

Ջաղացք դարձաւ։ Լա Հէօյն դուռը գոցած էր ու ներսէն փականքը դրած։ Բժիշկն հրեց զայն։

—Ես եմ, չի բանա՞ս, ըսաւ։

Ու լսեց որ գեղջկուհին ներսէն կը պատասխանէր.

—Անո՛նք են։ Զիս բռնելու եկած են։ Բայց չէ՛, չպիտի բանամ։

Բժիշկն ի զուր փորձեց։ Լա Հէօյն չը հնազանդեցաւ։ Այն ատեն, Ռընօտիէռ կառքը հեծնելով մեկնեցաւ, բոլորովին վարանոտ, նախազգալով թէ շատ չանցած աղէտ մը պիտի պատահէր։

—Ա՛հ, այս կիները՛, մռմռաց։ Ի՛նչ խենդ գլուխ ունին։ Անպատճառ յիմարութիւն մը պիտի գործէ, շատ կը վախնամ։

Երբ Սէրտօն հասնելով տուն մտաւ, Պակաթէլ եկաւ բանալ վանդակադուռը։ Ռընօտիէռ չնշմարեց սպասաւորին տարօրինակ կերպարանքը։ Կարծես շատ տաքցած էր։ Դէմքը կարմրցած էր, շունչը կտրած։ Եւ եթէ բժշկին խելքին փչէր հարցափորձ ընել, Պակաթէլ դժուարութիւն պիտի քաշէր պատասխանելու համար։

Սակայն Ռընօտիէռ իր խուցն ելաւ, առանց բան մը նշմարելու։

Պակաթէլ շատ կը սիրէր ձկնորսութիւնն և երբեմն Ժիւլէթէն արտօնութիւն կը խնդրէր՝ կիրակի օրերը, միջօրէէն յետոյ, երթալ ձուկ որսալու համար Պէօվրոնի եզրը։

Արդ, այն իրիկուն, իր կարթերը ժողվելու վրայ էր Շանդկրըլէի սահանքին մօտ, երբ ճանբուն վրայ իր տիրոջ կառքին ձայնը ճանչցաւ։

Ուշադրութիւն չպիտի ընծայէր, եթէ կառքն իր ճանբան շարունակէր դէպ ի գիւղը։ Բայց յանկարծ տեսաւ որ դէպ ի Շանդկրըլէ կ'իջնէր այն։

—Արդեօք ջաղացքը հիւա՞նդ կայ, հարցուց ինքնին։ Ուրեմն Լա Հէօյնն ըլլալու է, քանի որ Միռ-ա-Մօռ բանտն է։

Փութաց մինչեւ ջաղացքը վազել կողմնակի ճանբաներէ եւ ճիշդ ժամանակին հասաւ տեսնելու համար որ Ռընօտիէռ ներս կը մտնէր դուռնէն զոր կիսովին կը բանար Լա Հէօյն։

—Լա Հէօյնը հիւանդի երեւոյթ չունի։ Ուրեմն ի՞նչ ընելու եկած է Ռընօտիէռ։

Բնազդմամբ հոտ կառնէր թէ այդտեղ իրեն համար շահեկան բան մը կար։ Տանը մօտեցաւ, ականջը փեղկերուն դըրաւ։ Դժբաղդաբար գեղջկուհին ու բժիշկը ցած ձայնով կը խօսակցէին։ Անորոշ մրմունջ մը միայն կը լսէր։ Ծեղքուածքէ մը նայեցաւ ու նշմարեց զանոնք։ Ռընօտիէռ նստած էր, կռնակն իրեն դարձուցած։ Լա Հէօյն սաստիկ ոգեւորուած՝ այլանդակ շարժումներ կ'ընէր, աչքերը խոշոր բացած ու մոլար, խենդի կերպարանքով։

—Կրնայ ըլլալ որ, մտածեց Պակաթէլ, պառաւն հիւանդ ըլլայ. արդէն այնպէս ալ կ'երեւայ։

Իր հսկողութիւնը պիտի շարունակէր և թերեւս, ականջ կախելով կախելով, յաջողէր քանի մը բառ լսել, երբ տեսաւ որ Լա Հէօյն մի քանի անգամներ Ռընօտիէռին ցոյց տուաւ պատուհանն որուն ետին պահուըտած էր ինք։ Ռընօտիէռ ոտքի ելաւ, ժխտական նշաններ ըրաւ և վերջապէս դէպ ի դուռը յառաջացաւ։

—Պառաւն զգաց իմ հոս ըլլալս, մըրմընջեց։

Ու մէկ ոստումով անտառին մէջ մտաւ։

Ճիշդ ժամանակին էր։ Ինչպէս տեսնըւեցաւ, եթէ երկվայրկեան մըն ալ յապաղէր, Ռընօտիէռ իր սպասաւորը պիտի ձերբակալէր լրտեսութիւն ըրած պահուն։

Պակաթէլ շատ լաւ լսեց որ Ռընօտիէռ իր ետեւէն կը վազէր և սա խորհրդածութիւնն ըրաւ թէ ապահովապէս ջաղացպանուհին և բժիշկը շատ ծանր գաղտնիքներ ունենալու էին միմեանց հաղորդելու որ այսքան խոհեմութիւն ձեռք կ'առնուին և տօքթորը զինքն հալածելու կ'ելլէր, ինչպէս պարզ անտառապահ մը գաղտորս մը կը հալածէ։

—Այս ամենը կասկածելի է, ըսաւ ինքնին։ Նորէն Շանդկրըլէի շրջակայքը պիտի գամ ձուկ որսալու։

Դէպ ի Սէրտօն վազեց ուր հազիւ տօքթորէն քանի մը վայրկեան առաջ հասաւ։

Այս էր իր յուզման, մանաւանդ իր կարմրութեան պատճառը։

Ցոյժ մտազբաղ ըլլալով, Ռընօտիէռ ուշադրութիւն չընծայեց։

Ապագան սպառնալից կ'երեւէր իրեն։

Ժիւլէթ եւս ահուդողի մէջ էր մի քանի օրէ ի վեր։ Միռ-ա-Մօռի ձերբակալումէն սա չէ՞ր հետեւեր թէ դատական իշխանութիւնք յոյսերնին կորած չէին ոճրագործը ձերբակալելէ։ Ուրեմն դուցէ վերստին նեղէին իր հայրը։ Պիտի կրնա՞ր իր հիւանդ մօրմէն պահել այս նոր անձկութիւնները, այս նոր հալածումը։

Մնաց որ, միայն ինքը չէր այս բանին վրայ մտածողը։

Պէրժըրոյի մէջ, Անտրէ եւս ամենուն նման իմացած էր դաշտորսին ձերբակալումը։

—Այս մարդը անմեղ է, ըսած էր ինքնին. սակայն, քանի որ ձերբակալուեցաւ, ըսել է թէ իրեն դէմ կասկածներ կան։ Ի՞նչ են անոնք։ Ամեն պարագայի մէջ, այս անգամ իմ պարտականութիւնս գծուած է։ Միռ-ա-Մօռն ալ պիտի պաշտպանեմ, ինչպէս պաշտպանեցի Ռընօտիէռը։

Բայց չէր համարձակեր աւելի հեռուն մղել իր խորհրդածութիւններ ու անստոյգ ապագայն աչքի առաջ բերել։

—Եթէ Միռ-ա-Մօռ դատապարտուի, եթէ իւր ազատութիւնն ու պատիւը վըրայ տայ իր չգործած մէկ ոճրին համար, ի՞նչ պիտի ընեմ, ես որ բուն յանցաւորը կը ճանչնամ ու չպիտի կարենամ անմեղը փրկել։

Դատարանին ներկայանալով պիտի ըսէ՞ր դատաւորներուն.

—Ես Ռընօտիէռը պաշտպանեցի ու բարձրաձայն հռչակեցի իր պատուաւորութիւնը։ Զձեզ խաբեցի։ Ես ինքս խաբուած էի։ Այս մարդն յանցաւոր է։ Վիրժինի Լաթուշի սպանիչն ի՛նքն է։

(Շարունակելի)

Միլվօքի, Վիսքոնսին նահանգին ամենէն աւելի վաճառաշահ քաղաքը, բազմաթիւ գերման բնակիչներ ունի, որք ազգասիրութիւնն այնչափ յառաջ կը տանին որ իրենց նախակրթարանաց մէջ անգլիերէն ուսուցանել չեն ուզեր, ամերիկեան հողին վրայ ապրելով հանդերձ։

ԵՐԿԱԹՈՒՂԻՈՅ ԱՐԿԱԾ

Լոնտոնի լրագիրք կը պատմեն ահաւոր չարագործութիւն մը որուն զոհն է Գերմանիոյ մէջ ճամբորդող անգլիացի տիկին մը։ Սա Քէօլնէ մեկնելով գիշերային կառախմբով, Փոն հասած է ողբալի վիճակի մէջ։ Ճամբուն քլորոֆորմով մարեցուցեր են զինք, յետոյ բռնաբարեր և կողոպտեր են։ Անգլուհին իւր վրայ մեծկակ գումար մ'ունէր։ Կ'ենթադրուի թէ չարագործն ի Փրիւլ մտած է կառքին մէջ։ Անգլուհւոյն միտքն այնչափ շփոթ է որ չարագործին վրայ ո՛և է ծանօթութիւն առնալ կարելի չէ եղած։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԻՒՌՈՆԻ

Ներկայ 1890 տարւոյ սեպտեմբեր 30 ին ի տօնի Վարագայ Ս. Խաչի՝ բասյաջողելոյ Տեառն Աստուծոյ՝ Վեհափառ եւ Սրբազնագոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց Տ. ՄԱԿԱՐ մտադրեալ է Ս. Միւռոն օրհնել։

Ս. Միւռոնի օրհնութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրական արարողութիւններէն առաջինն լինելով, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ կանխաւ ի լուր ամենեցուն հրատարակել, որպէս զի ցանկացող բարեպաշտ հոգեւորականք և աշխարհականք ըստ նախնի սովորութեան ի ժամանակին ժամանեն ի Մայր Աթոռն և վայելեն Ս. Միւռոնի օրհնութեան շնորհքը։ (Արարատ)

ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐՆ Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Ինչպէս երէկ ծանուցինք, Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հայրն՝ ընկերակցութեամբ Քաղաքական Ժողովոյ Ատենապետ Ազնուաշուք Սահակ էֆէնտի Ղազարոսեանի և Պատրիարքարանի գործակատար Ֆրենկեան Աբրահամ էֆէնտիի՝ կիրակի օրը կայս. պալատ երթալով, երկրորդ Սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի պէյի կողմէ ընդունուեցաւ արժանավայել մեծարանօք։ Ս. Պատրիարք Հայրն Օգոստափառ Սուլթանի ծննդեան տարեդարձին առթիւ ի դիմաց Ազգին շնորհաւորութիւններ ու բարեմաղթութիւններ ընելէ յետոյ, Սենեկապետ պէյին յանձնեց Շնորհաւորական Ուղերձ մը որոյ պատճէնը կը հրատարակենք ի ստորեւ։

Վսեմ. Հաճի Ալի պէյ Ուղերձն առնլով, գնաց մատուցանել զայն յոտս գահոյից Օգոստափառ Սուլթանին և եկաւ Ն. Վեհափառութեան բարձր գոհունակութիւնն ու կայսերական ողջոյնն հաղորդել Ս. Պատրիարքին։

Ս. Պատրիարք Հայրը վերստին շնորհակալութիւն մատուցանելով ու բարեմաղթութիւններ ընելով վասն անդին կենաց Օգոստափառ Կայսեր, հրաժեշտ առաւ Սենեկապետ պէյէն։ Յետոյ, դարձեալ ընկերակցութեամբ Քաղ. Ժողովոյ Ատենապետ էֆէնտիին ու Ֆրենկեան էֆէնտիի, այցելութիւն տուաւ կայս. պալատան առաջին քարտուղար Վսեմ. Սիւրէյա փաշային որ նոյնպէս սիրալիր ընդունելութիւն մը ըրաւ Ն. Ամենապատուութեան և իրեն ընկերացողներուն։

* * *

Կիրակի օրը, իրիկուան կողմ, պալատական Թիկնապահ մը Ազգ. Պատրիարքարան գալով, Ս. Պատրիարք Հօր յանձնեց Վսեմ. Սիւրէյա փաշայի մէկ Թէզքէրէն, որով քարտուղար փաշան՝ ըստ կայսերական Իրատէի՝ կը հաղորդէ Վեհ. Սուլթանին բարձր գոհունակութիւնը Ս. Պատրիարքին կողմէ մատուցեալ շնորհաւորական ուղերձին համար։

Աւասիկ Սիւրէյա փաշայի Թէզքէրէն։

Էրմէնի բաթրիգլիկի ճանիպը վալէսընա.

Վէլատէթը պահիր իւսսատէթը հազրէթը Միլքտարի բուզը պիւրուզը մինսուպիէթիլէ արզը թէպրիքաթը հավի արիզէի պէհիյէլէրի մանզուրը Ալի օլարագ՝ պու սուրէթ մուճիպը մաձղուլիյէթը սէնիյէի ճէնապը Փատիշահի օլմալէ, պա իրատէի լութֆ ատէի հազրէթը Շէհինշահի Թէպշիր քէյֆիյէթէ իպթիտար գըլընըր էֆէնտիմ. ([illegible])

Սէր քեաթիպը հազրէթը Շէհրիարի

ՍԻՒՐԷՅԱ

Ֆիյ 16 չապան 307

Վէ ֆիյ 25 մարտ 306

* * *

Աւասիկ Ս. Պատրիարք Հօր ուղերձին պատճէնը։

Շէվքէթլու, Մէհապէթլու, քէմալը Մէրհամէթ ու Փատիշահըմըզ էֆէնտիմիզ հազրէթլէրի

Պու կիւն մէյմէնէթը փիւր մէյմէնէթը հիւմայունլէրի բուզը Փիրուզընա միւսատիֆ օլան օլ եէվմը միւսուտ իրր քի, պիլ ճիւմլէ Թէպաայ վէ պէրայա գուլլարը միջանընտա էրմէնի միլլէթի գուլլարը տախի զարիգը լիւձձէ փախր ու մէսար օլարագ՝ Թէվաֆուրը էյեամը էօմր ու իգպալը հազրէթը Փատիշահիլէրի էտիէի խայրիյէսինի քէմալը խիւլուսը գալպ իլէ լիսանը պարիխանը Բապալը Միւթէալ իթմէքտէ, վէ Թախթը ալի պախթը Օսմանիյէ չէրէֆվիւրուտը պուլան ճիւլուսը մէտամին մէնուսը Շահանէլէրինտէն պէրու ամալը լութֆ իշթիմալը Շէհրիարիլէրի վէհճէ մամուրիյէթը միլք ու պիլատ վէ սատէթ ու սէրվէթը իպատըն իսթիքմալի զըմընտա էլթաֆ ու ինայաթը մէալի զայաթը Միւլուքանէլէրինի գաթա տիրիղ պույուրմամըշ օլան, վէ պու ուղուրտա խալ ու րահաթըրը արտամադտա պուլունան Զաթը Շէվքէթ սիմաթը հազրէթը Թաճտարիլէրի կիւլի պիր Փատիշահը Թէպաապէրվէր վէ Շէհինշահը ատալէթ քիւսթէրի հիմայէթ սէնիյէ վէ սախապէթը րէ'ֆէթքրանէսինէ մազհար օլմուշ օլտուգլարընտան քէնտուլէրինի մէսուտ վէ պախթիյար ատտ իլէմէքտէ տիրլէր. վէ պու ապտը մէմնուքլէրի խոտ մին զայրը խոս Թիրնգար րէյիսը րուհանիսի պուլունտուղը էրմէնի միլլէթի գուլլարընըն հըսսիյաթը սատագաթքեարիլէրի վէ Թէշէքքիւր ու մահմէտէթլէրի Թէրճիմանը պուլունտուղում օլտուղու հալտէ քեմալը փախր վէ միւպահաթ խոտրիմ։

Հէման Ճէնապը Աֆէրինէնտէի քեայինաթ Փատիշահը էշֆագ վէ էրհէմ վէ Շէհինշահը փարուզիւխէմ էֆէնտիմիզ հազրէթլէրինին այէի հիւմայունը մէսատէթ մազրունլէրինի, տիւնեա տուրտուգճա գիւլզը վէ փարիգը իւսատ պուլուրսուն, ամին, սիւմմէ ամին։

16 Շապան 1307

Քաղաքական Ժողովն իւր վերջին նստին մէջ Ուսումնական Խորհրդոյ անդամ կարգեց Կիւլպէնկեան Յովհաննէս և Ալեանաքեան Գրիգոր էֆէնտիները։

Քաղաքական Ժողովն ինիստ պիտի գումարի վաղն ի խորհրդարանի Ղալաթիոյ։

Կիրակի գիշեր, Վեհ. Սուլթանի Ծննդեան տարեդարձին առթիւ՝ Երուսաղեմատունն ու Ամեն. Ս. Պատրիարք Հօր տունն եւ լուսազարդուած էին։

Նիւ-Եորքի «Թճի Չըրչ Մէն» անուն կրօնական շաբաթաթերթին մէջ փորագրեալ հրատարակուեր է Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմանէ առ եպիսկոպոսապետ Հայր Բօթթըր ուղղեալ շնորհակալութեան հայերէն նամակին բնագրին ճիշդ նմանն, անգլիերէն թարգմանութեամբ հանդերձ։ Յայտնի է թէ՝ Նորին Սրբազնութիւնն այս նամակն ուղղեց, իմանալով որ Հայր Բօթթըր անգամ մը մեր ազգային տրամադրութեան ներքեւ դրած է իւր մայր եկեղեցին, և անդ Ս. Պատարագ մատուցած է Ամերիկայի ազգային հոգեւոր հովիւ Գեր. Սարաճեան։ (Փունչ)

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Յառաջիկայ Ս. Զատկի առթիւ մեծաւորեանց այցելութիւններէ զերծ մնալու համար, Ս. Փրկիչ Ազգ. Հիւանդանոցի հաստատութեան մէկ մէկ մեճիտ նուիրած են Տեարք։

1.	Միքայէլ	Յակոբեան
2.	Տիգրան	Կիւմիւշկերտեան
3.	Պատրիկ	Կիւլպէնկեան
4.	Մատթէոս	Ունճեան
5.	Արփիկ	Ունճեան
6.	Սահակ	Ղազարոսեան
7.	Միհրան	Յովակիմեան
8.	Պօղոս	Էքսէրճեան
9.	Գրիգոր	Արապեան
10.	Ալեքսան	Խօրասանճեան
11.	Մասէհ	Մասէհեան
12.	Համբարձում	Մագպուլեան
13.	Յակոբ	Մագպուլեան
14.	Նիգօղ	Սեղբոսեան
15.	Մանուկ	Արզուեան
16.	Բարթիկ	Մնոյիկեան
17.	Աւետիս	Քօլօլեան
18.	Պապիկ	Քալչըեան
19.	Գաբրիէլ	Էլիկիւզէլ
20.	Սեբեթիկ	Նեմրուդ
21.	Կարապետ	Բասմաճեան
22.	Միհրան	Զօպանեան
23.	Միքայէլ	Մամիկոնեան
24.	Տիգրան	Գարակէօզեան
25.	Յակոբ	Մարտիրոսեան
26.	Յովհաննէս	Սէնէքէրիմ
27.	Յովհաննէս	Քէրէստէճեան
28.	Գրիգոր	Պարտիզպանեան
29.	Կարապետ Գ.	Փափազեան
30.	Ահարոն	Մարգարեան
31.	Մարտիրոս	Քօլօլեան
32.	Գաբրիէլ	Նորատունկեան
33.	Պետրոս	Պէյլէրեան
34.	Բարսեղ	Սթամպօլլուեան
35.	Գրիգոր	Թնկրեան
36.	Գամիկ	Հիւնքեարպէյէնտեան
37.	Մանուկ	Չիչէկեան
38	Զենոբ	Մերամէթճեան
39.	Յակոբ	Սեվաճեան
40.	Մկրտիչ	Ֆրէնկեան
41.	Սահակ	Քարաեան
42.	Յակոբ	Խանլըեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻՈՅ ԳԱՀԱԺԱՌԱՆԳՆ Ի Կ. ՊՈԼԻՍ

ԻՇԽԱՆԻՆ ԵՐԵԿԻ ՊՏՈՅՏԸ

Վիքթոռ Էմմանուէլ իշխանն երէկ առաւօտ իւր հետեւորդաց հետ պալատական կառքերով ի Բերա իտալական դեսպանատունը գնաց և միջօրէի ճաշն անդ ըրաւ։ Սեղանին ներկայ գտնուեցան իտալական դեսպանը, դեսպանուհին, դեսպանատան առաջին՝ քարտուղարը, կինն, առաջին թարգմանն և այլք։

Ճաշէն յետոյ, իշխանն ընդունեց Նախորդ Խտիվ Իսմայիլ փաշայի այցելութիւնն։ Ապա, Ն. Բարձրութիւն Բերայի ու Ղալաթիոյ այլ և այլ նշանաւոր վայրերն այցելելէ յետոյ Տօլմա Պաղչէ գնաց և անտի յատուկ շոգեմակոյկով յԷմիրկեան ի փոխադարձ այցելութիւն Նախորդ Խտիվ Իսմայիլ փաշայի։ Իշխանն Էմիրկեանէն ուղղակի կայս. պալատ վերադարձաւ։

Իտալական դեսպանը, դեսպանուհին եւ դեսպանատան գլխաւոր պաշտօնեայք երէկ իրիկուն կայս. պալատ գնացին եւ ճաշեցին իշխանին հետ։

ՄԵԿՆՈՒՄՆ ԻՇԽԱՆԻՆ

Վիքթոռ Էմմանուէլ իշխանն այսօր ժամ 5 ին Պաթում պիտի ուղեւորի Սուլթանիէ շոգենաւով, որ յատկապէս իր տրամադրութեան ներքեւ դրուած է։

Ն. Բարձրութիւն մեկնելէ առաջ Վեհ. Սուլթանին պիտի ներկայանայ իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանելու համար։

Իտալական դեսպանն եւ դեսպանատան պաշտօնեայք ինչպէս նաեւ կայս. Թիկնապահ Ահմէտ փաշա եւ Շէֆիք պէյ մինչեւ շոգենաւ պիտի երթան ողջերթ մաղթելու համար Ն. Բարձրութեան։

ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ ՎԵՀ. ՍՈՒԼԹԱՆԻ

Եւրոպական ու ասիական գաւառներէ Թուրք լրագրաց ուղղեալ հեռագիրք կը ծանուցանեն թէ Վեհ. Սուլթանի ծննդեան 49րդ տարեդարձը տօնուած է ամենայն շքեղութեամբ և թէ փայլուն լուսավառութիւնք ու հանդէսներ կատարուած են ամեն կողմ։

* * *

Պուքրէշէն ուղղեալ հեռագիր մը եւս կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձին օրը Ռումանիոյ նախարարապետ Պ. Մանօ, արտաքին գործոց նախարար Պ. Լահովարի, օտար դեսպանք և տեղւոյն օսմ. հպատակաց երեւելիք օսմանեան դեսպանատունն երթալով, շնորհաւորական այցելութիւն տուեր են դեսպան Ֆէրիտուն պէյի։ Գիշերն եւս դեսպանատան ներքին ու արտաքին մասերը լուսազարդուեր և Ֆէրիտուն պէյ շքեղ հացկերոյթ մը տուեր է օսմանեան հպատակ երեւելեաց։

ՎՍԵՄ. ՍԱՅԻՏ ՓԱՇԱ

Կիրակի գիշեր կայս. պալատան մէջ ի պատիւ Իտալիոյ Գահաժառանգին տրուած հացկերոյթի պահուն, Վեհ. Սուլթանն Իմթիազի ականակուռ պատուանշանը շնորհեց Արտաքին գործոց նախարար Վսեմ. Սայիտ փաշային։ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ իւր իսկ ձեռօք Վսեմ. Նախարարին կուրծքէն կախել այդ պատուանշանը։

ԱՍՏԻՃԱՆՔ

Իւլայի առաջին աստիճան տրուեցաւ մաքսային ժողովոյ անդամներէն Մէհմէտ Ալի պէյի։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐՔ

Թուրքիոյ եւ Անգլիոյ միջեւ վերանորոգելի առեւտրական դաշնագրոյն համար կազմեալ խառն յանձնաժողովը սկսած է ի նիստ գումարիլ ընդ նախագահութեամբ Արտաքին գործոց նախարարութեան խորհրդական Վսեմ. Յարութիւն փաշայի։

Ըստ տեղեկութեանց Թուրքէթի, Անգլիոյ կողմէ կարգեալ պատուիրակք դիւրութիւններ կընծայեն դաշնագրոյն ժամ առաջ կնքման համար։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Ներքին գործոց նախարար Վսեմ. Միւնիր փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողով մը երէկ ի նիստ գումարեցաւ և խորհրդակցութիւններ կատարեց։ Յանձնաժողովը կը կազմեն Առեւտրական ու հանրօգուտ շինութեան նախարար Զիհնի փաշա, մաքսային վերատեսուչ Րաիֆ փաշա և այլք։

—Անգլիական, ֆրանսական, գերմանական և պարսկական դեսպանք երէկ Բ. Դուռն երթալով, յաջորդաբար տեսակցեցան Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին և Վսեմ. Խորհրդականին հետ։

ՏՐ. ԲՈՂՉԷՆԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Տօքթէօր Բողչէն երէկ իրիկուն մեկնեցաւ մայրաքաղաքէս Արեւելեան Ճեմընթաց կառախմբով ի Բարիզ։ Մեծանուն բռօֆէսէօրին յուղարկ գնացած էին ի կայարան՝ Զօէրոս փաշա, Տր. Գամպուրօղլու, Տր. Բասիլաքիս, Տր. Նաղուպեան, Տր. Աբոսթօլիտէս, և այլ բժիշկներ ու բարեկամներ, ինչպէս նաեւ Պ. Թէօլօղոս, եղբայր Աթէնքի մեծահարուստ Պ. Թէօլօղոսին զոր դարմանած էր Տր. Բողչէն։

ՑՈՒՑՄՈՒՆՔ ՅԱԹԷՆՍ

Այս առտու Թ. Հաքիքաթ «Ցուցմունք յԱթէնս» խորագրոյն ներքեւ հելլէնացւոց սուտ եւ երեւակայական լուրեր հրատարակելու մասին ունեցած ճարտարութեանը վրայ խօսելով, իբրեւ օրինակ առաջ կը բերէ սա լուրը թէ վերջերս օսմանեան պատերազմական նաւ մը Ջէրիկօ կղզւոյն մօտ հելլէնական առեւտրական նաւերու վրայ յարձակեր է և թէ այս վերջինք այս ու այն կողմ փախեր են և այդ պատերազմական նաւ ո՛ր ազգին վերաբերիլը չը յայտնելու համար իտալական դրօշակ պարզեր է եղեր։ Այս լուր, կը յարէ Թուրք թերթը, նախարարական պաշտօնատուններէն ու ազգային ժողովէն անցնելով և այլ եւ այլ յաւելուածներով զարդարուելէ յետոյ Եւրոպա ղրկուեր, սակայն Եւրոպա այլ եւս հաւատ ընծայած չըլլալով այդ լուրին, Աթէնքի ազգային ժողովն հետեւեալ ձեւը տուած է այդ լուրը հերքելու համար։ Երեսփոխաններէ մին հարցում մը ուղղեր է այդ լուրի մասին և ծովային նախարարն ալ պաշտօնապէս հերքեր է զայն իբրեւ անհիմն և անստոյգ։

Առաջին անգամ այս լուրը տարածուած պահուն, կ'ըսէ Հաքիքաթ, հելլէն կառավարութիւնը զրահաւոր մը ղրկած է ի Ջէրիկօ և հրամայեր է որ հելլէնական նաւախումբը պատրաստ ըլլայ առաջին հրամանին մեկնելու։ Հաքիքաթ կը կասկածի թէ այս լուր հնարուած է իբրեւ պատրուակ, որպէսզի նաւային պատրաստութեան մը համար վարկ խնդրուի ազգային ժողովէն։

ԵԼՄՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ելմտական նախարարութիւնն հրահանգ ուղղեց ամեն կողմ որ տասանորդի և թաղապետական տրոց վարձակալք, իրենց վարձած տրոց համար միայն Թէմէթթիւ տուրքէ պէտք է ազատ մնան, իսկ իրենց ուրիշ առեւտրոց համար պարտին վճարել այդ տուրքը։ Նոյնպէս ամեն անոնք որք տարւոյն սկիզբը ո և է զբաղում մը չունին և յետոյ այդ տարւոյն մէջ ո և է առեւտրով կ'զբաղին, պարտին վճարել Թէմէթթիւի տուրքը։

ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ

Երզնկայէն կը գրեն առ Հաքիքաթ թէ Դ. զօրաբանակի հրամանատար Մէհմէտ Զէքի փաշա իւր պաշտօնի կոչուած օրէն մեծ ծառայութիւններ մատուցած է։ Ն. Վսեմութիւն ի մասնաւորի տեղւոյն հանրային ապահովութեան համար հարիւրապետի մը պաշտօն յանձնած է հալածել ու ձերբակալել աւազակներն։ Այդ հարիւրապետին ջանքերով նահանգին մէջ ասպատակող աւազակաց բոլորն ալ ձերբակալուած են ողջ կամ մեռած։ Տեղացի ժողովուրդն այս առթիւ շնորհակալեաց հանրագիր մը մատուցած է բարձրագոյն իշխանութեան։

Մախսուսէի [illegible] շոգենաւն, որ երէկ ի Ճիտտէ պիտի փոխադրէր Հիճազի նոր կուսակալ Հաքքը փաշան ինչպէս նաեւ նոյն նահանգին սովելոց համար եղած նըպաստներն, Ոսկեղջիւրէն դուրս ելած պահուն Գարաքէօյի կամուրջին զարնուելով, փոքր ինչ վնասուեցաւ և այդ պատճառաւ այսօր ճամբայ պիտի ելնէ։

—Եղեռնադատ ատեանը տասն-հինգ տարուան շղթայակապ աշխատութեան դատապարտեց Քէլ Մէհմէտ անուն ձիավոր մը, որ անցեալները Ղալաթիոյ մէջ սպաննած էր իրեն արհեստակիցներէն սամսոնցի Սողոմոնը։

—Այս կիրակի օր Պոլսոյ Աթիք Ալի Փաշա թաղէն անցնող Թրամվէյի կառք մը կոխատեց Այասոֆիայի Մէտրէսէին աշակերտներէն Ահմէտ էֆէնտին, որ երեսէն ու աչքէն վիրաւորուեցաւ։ Ոստիկանութեան պաշտօնեայք հասնելով, հիւանդանոց փոխադրեցին զնա։

—Անցեալ շաբաթ օր ի Պէշիքթաշ նորակառոյց տան մը մէջ աշխատող որմնադիր մը տան վերի յարկէն վար ինկաւ և աջ ոտքը կոտրեցաւ։

—Այս կիրակի օր Թուրք կին մը ինքզինքը ծովը նետեց Էյուպի ծովեզրէն։ Նաւավարք օգնութեան փութալով, ազատեցին, սակայն կինը գլուխէն ծանր վէրք մը ստացած ըլլալով, հիւանդանոց փոխադրուեցաւ։ Կնոջ անձնասպանութեան փորձելու շարժառիթ եղած է իւր որդւոյն մահուան գուժը։

—Զմիւռնիայէն կը գրեն թէ երաշտութիւնը ցարդ կը շարունակէ և ամեն կարգի հունձքեր անձրեւի կարօտ են։ Անցեալ օր կուսակալութեան կողմէ հեռագրեր ուղղուելով Այտընի նահանգին գաւառաց, յանձնարարուած է անձրեւի համար հրապարակային աղօթքներ կատարել։

—Երէկ Սամաթիոյ մէջ Մկրտիչ անուն տասներեք տարեկան տղայ մը ատրըճանակ պարպած պահուն, հրազէնն հակառակ կողմը դարձաւ և տղուն բերնին ձախ կողմը վիրաւորեց։

—Մայրաքաղաքս եկող ութսուն չափ հունգարացի զբօսաշրջիկներ, որք մէկ քանի օր ի վեր Պոլսոյ նշանաւոր վայրերը կ'այցելեն երէկ եւս Էտիրնէ Գաբուի կողմերն երթալով այցելեցին Գաարիյէ մզկիթն և այլ տեղեր։

—Նախընթաց օր Գասըմ Փաշայի մէջ յանկարծակի սենեակ մը փլաւ, ուր տասն և հինգի չափ Թուրք կանայք հաւաքուած էին կրօնական արարողութեան մը համար։

—Երէկ գիշեր ի Պոլիս Սուլթան Մահմուտի դամբարանին հանդէպ փողոցին մէջ գտնուած կազի մեծ խողովակն պայթեցաւ ահռելի շառաչմամբ և կազը լեցուեցաւ մօտը գտնուած տան մը ջրհորին մէջ։ Տնեցիք յուզուելով ջրհորին մօտ վազեցին, սակայն տնեցիներէ միայն երեքը, մօրուքն ու թեւերն այրեցան զի կազը բռնկած էր։ Ոստիկանութեան պաշտօնեայք իմանալով անմիջապէս դուրս հանեցին տնեցիներն եւ տունը հսկողութեան ներքեւ առին։

ՏԻԿԻՆ ԱՆԴՈՒԱՆԷԴ ԷԼՎԻՐԱ Վիէննայէն ուղղակի մայրաքաղաքս հասած է քիչ ժամանակի համար։

Այլ եւս գաղտնիք չկայ։ Այս ՔՆԱՇՐՋԻԿ կինը իր պատ. այցելուաց կը պարզէ անցեալն և ապագային բոլոր գաղտնիքները. շատ յստակ պատասխաններ ու խորհուրդներ կուտայ ի մասին առեւտրական, ընտանեկան ու այլ գործոց, խորհուրդներ որք իրենց արդիւնքը կ'ունենան ապագային մէջ։

ՏԻԿԻՆ ԱՆԴՈՒԱՆԷԴ ԷԼՎԻՐԱ երկու սեռէ այցելուներ կ'ընդունի իր բնակարանին մէջ ի Բերա, Թիւնէլի կայարանին դէմ, Ճիւմպիւշ փողոց, Թիւ 8 տունը, ամեն օր Նւր. ժամ 11էն մինչեւ 6։ Խօսակցութիւնք կը կատարուին ամեն լեզուաւ։

408 1—3

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ

ՍԻՄՓՈՆԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հելլէն-Կաթոլիկ [illegible] ընկերութեան ի նպաստ նուագահանդէս մը կազմակերպուած է որ տեղի պիտի ունենայ ապրիլ 7/19ի շաբաթ երեկոյին ի Բերա, Յունաց Սիլլօգոսի սրահին մէջ, ընդ հովանաւորութեամբ ֆրանսական և հելլենական դեսպանատանց։ Նուագահանդէսի յայտագիրը կը պարունակէ Վինէվսքիի, Ռէյէրի, Վէպէրի, Լիստի, Կունոյի, Շումանի, Մասընէի, Մէյէրպէրի, Տօնիզէթիի և այլ վարպետներու երաժշտական ընտրելագոյն կտորները, զորս պիտի նուագեն ու երգեն Օրիորդք Հօննէկէր, Բիւվերէլ, Թալասօ և Պարօնայք՝ Սիլպէր, Պալլատոր, Ալպանէզ, Սելվէլլի, Ալմառոր, Քեօսէեան, ինչպէս նաեւ Հէլլ. Սիլլօգոսի խմբերգութը՝ առաջնորդութեամբ Տէզլէ ուսուցչին։

Նուագահանդէսի կազմակերպութեան ու յաջողութեան հսկելու համար կարգադիր մասնախումբ մը կազմուած է, նախագահութեամբ հելլենական հիւպատոսարանի նախագահ Պ. Նաւսի։ Քարտուղարն է Պ. Բէլման Հիւառ, թարգման ֆրանսական դեսպանատան, և գանձապետն է սեղանաւոր Պ. Ռընէ Պոտուի։

Մտից տոմսի գինն է կէս օսմ. ոսկի։

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՎԱՃԱՌԱՏԱՆ

Ա. Մ. ԳԱՐԻՊԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան, որ իւր թղթավաճառանոցը տեղափոխուած է, Եւիզօրէ Գալտըրըմ նոյն կարգն, աւելի վար 44 թիւը։

Այս պատեհութեամբ Նոր ապրանքներ հասած են Եւրոպայէն։

ՄԻՇՏ ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐ

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՈՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ

359 5—6

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

Պելկրատ, 7 ապրիլ

Երէկ, Վեհ. Սուլթանին Ծննդեան տարեդարձին առթիւ, Թուրքիոյ դեսպանատունը դրօշակներով զարդարուած էր։ Գիշերը դեսպանատունն և պարտէզը շքեղապէս լուսաւորեցան։ Օսմ. դեսպանն ընդունեց Նախարարապետ Կրուիչ զօրավարին այցելութիւնն, և երեկոյին մեծ հացկերոյթ տուաւ ի Պելկրատ բնակեալ օսմ. հպատակաց։

Լոնտոն, 7 ապրիլ.

Կալէսի իշխանուհին՝ թեթեւապէս անհանգիստ՝ չկրցաւ Սէնտրինկէմ վերադառնալ, իշխանական պալատը։

Քան, 7 ապրիլ.

Տոմ Փետրօ կայսր աղէկ է քիչ մը. կիրակի ելաւ անկողնէն և երեկոյին իւր զաւակաց հետ ընթրեց, բայց տակաւին դուրս չելաւ։

Քօփէնհակ, 7 ապրիլ.

Յովհան արքայազուն իշխանն հիւանդ է։

Հռոմ, 7 ապրիլ

Ումպերդոյ Թագաւորը խնդակցական սիրալիր հեռագիր մը ուղղեց Վեհ. Սուլթանին, Նորին Ծննդեան տարեդարձին առթիւ։

Վաշինկթօն, 7 ապրիլ

Ծերակոյտն ընդունեց օրինական ծրագիր մը, որով կը հրամայէ առողջապահական քննութեան ենթարկել խոզենին և աղած ճարպն որք կը ղըրկուին այն օտար երկիրներ ուր այս քննութիւն պարտաւորիչ է։

Միացեալ Նահանգաց նախագահին արտօնութիւն տրուեցաւ ողջ արջառի ներածումն արգիլել, ի նախազգուշութիւն պաճարախտին։

Մատրիտ, 7 ապրիլ

Երեսփոխանաց ժողով. — Պատերազմագործոց նախարարը, Գասթիլիոյ զինուորական կուսակալին հարցման պատասխանելով, յայտարարեց թէ քննութիւն պիտի բանայ Սալձէտօ զօրավարին անկարգապահութեան դէպքին վրայ։ Զօրավար Տապանի դէպքին վրայ վիճաբանութիւնը կը շարունակուի։ Մարէշալ Մարթինէզ Գամբոս պարսաւեց կառավարութեան ընթացքը, բայց խոստովանեցաւ թէ հարկ է պաշտպանել կարգապահութիւնը, ([illegible])

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 27 մարտ

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ	(Պանքայի)	110 7/8
3 » »	(վճռելին)	109 1/2
3 » Բարիզի »	(պանքայի)	22 90
3 » »	(վճռելին)	22 97 1/2

Օսմանեան Քոնսօլիտէ

Երէկ երեկոյ գոց. (Միաց. Պ. Սէրի		— —
Զօրաւոր գոցուելէն վերջը	»	— —
Բերայի մէջ	»	20 12
Առաւօտուն բացուեցաւ	,	20 12
Կէս օրին	»	20 10

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՏԱՒԻԼԻ

Երէկ երեկոյ	54
Այս առաւօտ	54
Կէս օր	53 25

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Փոխառութիւն	A. Սէրի	— —
»	B. »	— —
»	C. »	20 15

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Պօսթէնճի քէնէրալ	Անգլ.	Լր.	4 29
Կրէտի քէնէրալ	Օսմ.	»	8 31
Պանք տը Գօնս.	»	»	7 14
[illegible]	»	»	4 34
Թրամվէյ	»	»	477 1/2
Ռումէլի երկաթուղի		Ֆր.	72 75
Նիքքէլօփոն տը Բրէօրիթէ		»	— —
[illegible] Լավրիօմի	Գ. Կ.		116

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 Ֆրանքնոց	»	87 29
Անգլիական ոսկի	»	110 12
Իմբէրիալ	»	90 20
Քրիմիյ	»	51 12
Ռուսդի Թղթադրամ	»	8 36
» արծաթ	»	77
Մեճ. արծաթ. (տարբ)	»	108 4
Վ[illegible]	»	108 20
Հինգնոց	»	108 20
Մէթալիք	»	101
Թաափէիէ	»	11

ՏՈՔԹՕՐ ԹՐԷԼԱ

Ականաւոր վիրաբոյժ Տոքթ. Թրէլայի մահուան առթիւ, Տոքթ. Յակոբ էֆէնտի Նըմասեան, ի դիմաց Բարիզի օսմանեան բժշկաց, հետեւեալ բանախօսութիւնն արտասանած է Մոնմարթրի գերեզմանատան մէջ.

Տեարք.

Թոյլ տուէք ինձ գալ, յանուն Բարիզի օսմանեան բժշկաց, վերջին մեծարանք մը մատուցանել այս սիրեցեալ վարպետին զոր ամէնքս կ'ողբանք։

Իր մահուան տխուր գոյժը, Կ. Պոլիս հասնելուն, անդ պատճառած է ընդհանուր և միահամուռ վիշտ բժշկական դասուն մէջ։ Օսմանեան ոստանին մէջ ոչ ոք մոռցած է ճարտար վիրաբոյժին ուղեւորութիւնն և նորա ըրած սքանչելի հրապարակախօսութիւնները։ Որպէս աստ, կրցան գնահատել նորա նիւթին պայծառութիւնը, լեզուին ճշդութիւնը, մեթոտին ապահովութիւնը։

Շատ յառաջդիմութիւններ որք այսօր իրագործուած են վիրաբուժական արուեստին մէջ, կրնան նմա վերագրուիլ անժխտելի կերպիւ։ Ես իսկ բաղդ ունէի նորա աշակերտն ըլլալու։ Երջանիկ և տըխուր եմ միանգամայն զի կրնամ, իբր այն, յանուն իւր բոլոր օսմանեան աշակերտաց, գամ մի եւս շնորհակալ լինել նմա գերեզմանին եզերաց վրայ։

Իւր անունը միշտ ի յարգանս եւ ի պատուի պիտի ըլլայ մեր մէջ։

Մնաք բարո՛վ, սիրեցեալ վարպետ, բընաւ չպիտի մոռնանք զձեզ։

Զմոռնանք յիշել թէ Բարիզի օսմանեան բժիշկք, որք աշակերտած էին Պ. Թրէլայի, ծաղկեփունջ մը դրած էին նորա դագաղին վրայ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Տնտես. Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Ս. Երուսաղեմայ վաքֆէն Գումգաբու Թիւֆէնկճի Հիւսամէտտին թաղ. Մէքթէպ փողոց թիւ 33 տունը՝ որ 250 կանգուն գետնի վրայ կառուցեալ է եւ ունի վեց սենեակ, երկու սրահ, երկու ջրշեղջ, մէկ ջրհոր, մէկ մախսէն եւ 250 կանգուն պարտէզ, Պատրիարքարանի որոշմամբ վաճառուելու համար աճուրդի դրուած է։

Գնելու փափաքողք կը հրաւիրուին բաց ի կիւրակէ եւ տօն օրերէն մինչ Նոր կիւրակէ (ապրիլ 8) ամէն օր ժամ 4 էն 10 ներկայանալ Ազգ. Պատրիարքարանն Անցագրատան տեսուչ Բլատեան Սեպուհ էֆէնտիի։

3—3

ՏԷՐ ՀՕՐԸ ՊԱՀԱՋԲԸ

«Փատր գիւղի քահանան» իր վերջին յօդուածովը կը պահանջէ որ [illegible] դրամ ուզող քահանան մատնանիշ ընէ, և հրապարակի մէջ՝ քահանայական դասու նկատմամբ՝ գայթակղութեան տեղի չթողում. «իմ անխուսափելի պարտքս է» եղեր այս։

Ի պատասխանի կ'զգացնեմ իրեն որ հրապարակի վրայ այդ [illegible]՝ քահանայի մը մեղքերս խոստովանելու պէս, չեմ կրնար յանձն առնուլ՝ չտալով Տէր Հօր պահանջքի իրաւունք և յանէտ ի բաց մերժելով իր կասկածոտ նախադասութիւնները թէ «որ եթէ կայ,—որ եթէ ճշմարիտ է»։ Ես սուտը գրչի տակ չեմ դներ։

Քահանայական դասու պատուոյն վըրէժխնդիր Տէր Հայրն ի՞նչու ցարդ միևնոյն նախանձայուզութեամբ չելաւ ջրելու, Գալուստ բարապանի դագաղին առթիւ, Աւետաբերի և Մասիսի կծու դիտողութիւնները, որ սևերու պէս փռուած մընացին քահանաներու վրայ։ Կը թուի թէ ատոնք բան մը չեն, և միմիայն պէտք է մատնանիշ ընել մուրացիկ հինէն դրամ պահանջող Տէր-տէրը, որպէսզի պատժուի «ի զգուշութիւն այլոց»։ Լաւ, թող կոչէ զիս Պատրիարք Սրբազանը, պատրաստ եմ պատասխանատուութեան. մատնանիշ կ'ընեմ, և թող անմեղը քարը նետէ անոր վրայ։

ՀՐԱՆԴ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

(Տրամախօսութիւն արտասանեալ Բերայի Ազգային Արուեստագիտական Ուսումնարանի Մրցանակաբաշխութեան օրը.)

Գիտ.—(Մեկուսի) Աս ո՛րքան յոգնած է գլուխս. եւ ի՞նչպէս չը յոգնի. Երկար ժամեր հաշուական կնճռոտ խնդիրներով կամ ուրիշ գիտական նիւթերով զբաղելէ յետոյ՝ անպատկան դրացւոյ մը անվերջանալի դղրդիւնները կուգան գլուխս կը ճաթեցնեն օրն ի բուն։ Այս արհեստաւորք բնա՛ւ չը գիտեն յարգանք ընծայել գիտութեան մարդուն։ Այն օրէն ի վեր որ արհեստաւոր մ'ունիմ ինծ դրացի, հանգստութիւնս վրդոված է գիշեր ու ցերեկ։ Ինք պէտք ունի անդադար բանեցնել իր մեքենաները, առանց իսկ վայրկեան մը մտքէն անցնելու թէ կ'սպաննէ զիս, հաշիւներս կը խանգարէ, և անուշ մտածմանցս մէջ, մինչ կը մոռնամ ամեն իրական ինչ, յանկարծ չռինդ մը գլուխս կը զարնէ և չուարեալ ու չփոթեալ կը գտնեմ ինքզինքս գրասեղանիս առջեւ։

(Արհեստաւորը ներս կը մտնէ.) Ա՜հ, դո՞ւք էք, դրացի, ի՞նչ յարմար ատեն ներս կը մտնէք, ես ալ ձեզի խօսելիք ունէի

Մինչեւ ե՞րբ այս տգէտ վիճակին մէջ պիտի մնաք, դուք արհեստաւորքդ. ե՞րբ պիտի սովրիք պատշաճ կերպով վարուիլ. առտո՛ւ է, իրիկո՛ւն է, գիշե՛ր է, այս կարգի հաշիւներ չունիք բնաւ. անդին ի՞նչ են, արթուն են, հիւր ունին, գիր կամ ընթերցում ունին, ատոնք բնաւ արժէք չունին ձեզ. կը նստիք մեքենային գլուխն և ահա կը դղրդէք դուռ ու դրացի։ Գոնէ քիչ մը յարգանք առ մարդիկ մանաւանդ երբ անոնք ամենայն առաւելութեամբք օժտեալ են, երբ գիտութեան մէջ կը պաշտուին անոնք։ Յորմէ հետէ ինծ դրացի եղած էք՝ տարակոյս չունիմ թէ և ոչ իսկ վայրկեան մը մտքէ անցուցիք թէ ձեր զանազան գործիքներուն չռնչիւնները գիտունի մը գրական թանկագին վայրկեանները կրնային սպաննել. ուստի անփոյթ և անխիղճ, հնչեցուցիք ու հնչեցուցիք ձեր մեքենաները. կ'աղաչեմ, դրացի, Աստուծոյ սիրուն ըլլայ, քիչ մը մարդավարութիւն և յարգանք ձեր դրացւոյն, որ մեծ շնորհ բրած է՝ ձեզ իրեն դրացի ընդունելով։

Ար.—Ա՛լ հպարտութեան չափն անցուցիք, բաւական չէ որ խոնարհութեան օրինակ հանդիսանալով՝ եկայ ձեզ այցելել, մէյ մըն ալ պէտք է որ ձեր յանդիմանութեանց արժանանամ։ Ի՞նչ է եղեր.— գործիքներուս ձայներն զինքն անհանգիստ կ'ընեն եղեր, իր գիտութեան թանկագին ժամերը կը սպանե՛ն եղեր։ Ուստի պէ՞տք է որ գործիքներս դադրեցնեմ, որպէս զի գիտական մարդը լաւ խորհի լռութեան մէջ։

Բայց սա՛ խորհեցէք անգամ մը, իշխանուհիդ գիտութեանց, թէ մինչ դուք գլուխնիդ երկու ձեռքերնուդ մէջ առած կը ճնշէք ու կը ճզմէք, և երկար խոհերէ յետոյ՝ հինգ տող բան դժուարաւ կը գտնէք ձեր գրչին ծայրը դնելու, իմ գործիքներս ի՛նչ ահագին և ի՛նչ բազմադիմի գործեր կ'արտադրեն, որոնք ամենքն ալ մարդկութեան բարեկեցութեան, ուրեմն յառաջդիմութեան կը նպաստեն։

Վեհապետներու պալատներէն սկսեալ մինչեւ յետին աղքատին բնակած խրճիթը արուեստին շնորհները կան. աշխարհի սկիզբէն մինչեւ ցայսօր եղած յառաջդիմութիւնք ամենքն ալ արհեստին զօրութեամբն եղած են. Եւ եթէ արհեստը չըլլար, մարդիկ ի՞նչպէս պիտի կրնային մէկ քանի օրերու մէջ՝ հին աշխարհէն նոր աշխարհը փոխադրուիլ։ Եթէ արհեստաւորը չըլլար, մարդիկ ի՞նչպէս պիտի կրնային աշխարհային ամեն չքեղութիւնները, ամեն պերճանքները վայելել. Նոյն իսկ սա՛ հագած պարեգօտնիդ եւ կրած բոլոր զարդերնիդ՝ արհեստաւորին ձեռքէն ելած են. եւ դուք ի՞նչպէս կ'ըսէք թէ արհեստը պէտք է լռէ գիտութեան առջեւ։

Գիտ.—Այո՛, կը հաւանիմ որ արհեստաւորը մեծ ծառայութիւններ մատուցած է մարդկային ազգին յառաջդիմութեան գործին մէջ, թէ արհեստով կը շարժին գործիքներ ամեն, արհեստով կրցած են մարդիկ կտրել հեռաւորութիւններ և ծովերով, լեռներով անջատուած աշխարհներ յարաբերութեան մէջ դնել. Լաւ. այլ ո՞վ կը մղէ այս արհեստները դէպ ի առաջ. չէ՞ որ միտքն է այս ամենը վարողը. չէ՞ որ ըղեղի զօրութեամբ կը շարժի ձեռքը. միթէ բազուկը կարո՞ղ է գործել առանց ըղեղի ուղղութեան. Ուրեմն, համոզուեցէք, դրացիդ իմ, թէ գլուխն է որ գործել կուտայ ձեռաց. գիտութիւնն է որ արհեստը կը հնարէ։

Արհ.— Դուք ձեզ միշտ գերակայ համարած էք արհեստաւորէն, ուստի հեշտ չէ ձեզի ըմբռնել թէ արհեստաւորն ալ կը հաւասարի այսօր ձեզի։ Ես կը հաւանիմ ձեր ըսածին թէ ըղեղին դրդմամբ կը շարժի ձեռքը, թէ գլուխն է բազուկին գործն ազնուացնողը. սակայն դուք ալ սա՛ կէտը լաւ ըմբռնեցէք, որ եթէ ձեռքն առանց գլխուն չէ կարող լաւ գործել, գլուխն ալ առանց ձեռքի ոչինչ չէ կարող արտադրել. ուրեմն համաձայնինք, դրացիդ իմ,— ինչպէս կը հաճիք զիս կոչել—, և ըսենք միաբերան՝ որ գիտութիւն և արհեստ, թէեւ անջատ մէկմէկէ, մին զմիւսն կը լրացնէ։ Այս համոզմամբ ապրինք երկու պատից դրացնուհիք։

Գիտ.—Կը հաւանիմ. միայն թէ պայման մը կայ, զոր պարտիմ ձեզ գիտել տալ։ Յարգանօք նայեցէք մեզ, որ յառաջդիմութեան տիեզերական ոգին եմք. և այս համոզմամբ ապրինք այս յարկիս տակ, ուր ես՝ միտքերը սնուցանեմ և բարձրացնեմ գծծութենէ վեր. դուք՝ մատները վարժեցէք կտրելու, կարելու, ձեւելու. ես՝ արժանապատուութիւնը ծրարեմ սըրտերու մէջ, դո՛ւք նիւթականը պատրաստեցէք։ Այս պայմաններու տակ, կը դաշնակցիմ ձեզ և միեւնոյն սեղանի վրայ կը դնենք հոս ասեղն ու մկրատը գրչին ու կաղամարին հետ, կերպասը թղթին ու գրքին քով։ Տուր ինծ այդ ձեռքդ, բոլոր հանդիսականք թող վկայ ըլլան. խնդրենք որ բարձրաշնորհ Սրբազան Հայրն ալ օրհնէ այս դաշնակցութիւնն։

ԺԸՆԵՎԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Գեղաշուք քաղաքաց ու գիւղից գրեթէ անընդհատ շղթայ մը կը տարածուի Լէմանի եզերքին, մանաւանդ Զուիցերական ափանց վրայ։ Ամենէն նշանաւորն է Ժընեւ՝ լճին հարաւային ծայրն, Զուիցերի ամենէն հարուստ և ամենէն բազմամարդ քաղաքն 72 հազար բնակչօք, քաղաք մը՝ որ յոյժ կարեւոր դեր մ'է կատարած եւրոպական պատմութեան մէջ, յաջորդաբար Հռովմայեցւոց, Պուրկոնտացւոց, Փրանկաց, Գերմանական կայսրութեան, Վատիկանի, Սավուայի դքսոց ձեռքն անցած, և այնքան հռչակաւոր հանդիսացած իւր ինքնապաշտպանութեան երկարատեւ ու անխոնջ ջանքերովն։ Յոյժ նպաստաւոր է իւր աշխարհագրական դիրքն ի մէջ Ֆրանսայի, Իտալիոյ և Գերմանիոյ, և ամէն տարի աւելի քան 30 հազար օտարական այցելուներ կ'ընդունի։

Ժընեւի իմաստալից նշանաբանն է «Post tenebras lux», որ կրնայ բովանդակութիւնն ու միանգամայն բացատրութիւնն համարուիլ իւր անցելոյն ու ներկային հրահանգիչ պատմութեան. ՅԵՏ ԽԱՒԱՐԻ ԼՈՅՍ։

Քանի մը տարիներ առաջ բարեբաղդութիւն ունեցած էի շատ մը հաճելի օրեր անցնել ի Ժընեւ, և այս անգամ թէեւ խիստ մօտ՝ ստիպուած էի շատանալ միայն վերակոչելով անցելոյն յիշատակներն։ Եւ այդ յիշատակները դեռ աղօտացած չէին մտացս մէջ։

Ռօն որ կը սուզի ի Լէման, պղտոր, դժգոյն, դուրս կը ցլանայ ուժգին թափով մը Ժընեւի առջեւ մաքուր, վճիտ և կապոյտ, և քաղաքն կը բաժնէ երկու մասանց, որք միացեալ են ութ կամուրջներով։ Ամենէն հոյակապն, բարձրագոյնն ու չքեղագոյնն է Մօն Պլան կամուրջն 280 կանգ. երկայնութեամբ։ Երեկոյ էր երբ հասայ ի Ժընեւ, և միշտ պիտի յիշեմ իմ կրած տպաւորութիւնս, երբ գիշերն առաջին անգամ կանգ առի այդ հրաշալի կամուրջին վրայ, որոյ բազմաթիւ շողշողուն լոյսերն կը ցոլային յստակ ջուրց վրայ, քաղաքն համակ ողողուած կը թուէր երփներանգ լոյսերով, և զուարթութիւն, կենդանութիւն կը տիրէր ամենուրեք, իբր թէ հանդէս մ'էր որ կը կատարուէր ցնծալից։

Երկրորդ առաւօտուն կանուխ փողոցին մէջ կը հանդիպիմք դիպուածաւ օտարազգի բարեկամի մը, ուսանող ի Ժընեւ, որ գիշերն ողջոյն ակռայի մը ցաւովն տառապած՝ ատամնաբուժին կը դիմէր դարման գտնելու յուսով։ Այս անակնկալ հանդիպումն այնքան կուրախացնէ զինքն, ինչպէս և զմեզ, որ կը մոռնայ ատամն ու ատամնաբոյժն, ու մեզ կ'ընկերանայ օրն ի բուն քաղաքին այլ և այլ մասերն այցելելու։

Կ'այցելեմք Համալսարանին շէնքերն երեք տարբեր մասերէ բաղկացեալ, որք ապակեայ անցքերով կցուած են միմեանց, իւր դասախօսութեանց սրահներն, աշխատանոցներն են։ Մեր մասնաւոր ուշադրութիւնն կը գրաւէ ատենախօսութեանց ընդարձակ սրահն ճոխապէս կահաւորեալ։ Եօթանասուն ուսուցիչներ ունի այն համալսարանն և գրեթէ 700 ուսանողներ։ Ժընեւ Եւրոպայի գիտական ու գրական կեդրոններէն մին կը համարուի իրաւամբ։

Կը մտնեմք «Աթենէ», արուեստական հաւաքածոյից նուիրեալ շէնք մը, որոյ ճակատն զարդարուած համբաւաւոր ինն Ժընեւցւոց կիսանդրիներովն։ Հոս կայ նաև ճարտարագործութեան հաւաքածոյ մը, որ կը պարունակէ ի մէջ այլոց Ս. Կօթարի փապուղին ծակելու համար գործածուած մեքենաներն։ Կը մտնեմք բնական գիտութեանց Թանգարանն՝ մեծ ճաշակաւ կարգաւորեալ. Հասարակաց գրատունն, որ կը պարունակէ 100,000 տպագիր և 1600 ձեռագիր հատորներ, ունի ընթերցարան մը, հաւաքածոյ մը հին և արդի ականաւոր անձանց կենդանագրոց, ինչպէս Լաֆօնթէն, Տէքարթ, Փարէլ, Զուինկլ, ծովակալ Քոլինյի, որոյ ի յիշատակ արձան մը կանգնուեցաւ ի Փարիզ դեռ անցեալ տարի։ Տ'Օպինեէի, Բարեկարգութեան պատմութեան հեղինակին պատկերն է որ մանաւանդ կը կասեցնէ մեր հայեացքն. պահապանն, որ ճանչցած էր զինքն, կը հաստատէ մեծ հաճոյքով թէ նմանութիւնն կատարեալ է։ Հայերէն ձեռագիրներ ալ կան, Աստուածաշունչ, Նարեկի կտորներ, նոյնպէս Պարսկերէն ու Արաբերէն ձեռագիրներ։ Հոս կը տեսնեմք նաեւ կիզոյի ձեռագիրն, Պօնաբարթի ստորագրութիւնն են։

Կ'այցելեմք քաղաքին Նորակառոյց, հոյակապ թատրոնն, ճակատն սիւներով ու արձաններով զարդարուած. ներսն, որ տեղ ունի 1300 հանդիսականաց համար, չքեղապէս պճնուած է քանդակներով ու որմական նկարներով։ Պատկերաց դահլիճն՝ զոր ծընընդեամբ Ժընեւցի Ռաթ ռուս զօրապետն հիմնած է, հասարակութեան գոց էր նորոգութեանց պատճառաւ։

* *

Ֆրանսացիք՝ Յեղափոխութեան միջոցին իրենց երկրին կցեցին զԺընեւ, բայց 1814ին յետ անկման Պօնաբարթի Ժընեւ միացաւ Հելվետական Դաշնակցութեան, և իւր շրջակայ գիւղերովը կազմեց Զուիցերական քսան եւ երկու Քանթօններէն փոքրագոյններէն մին։ Այս միացման ի պատիւ լճին ձախ ափանց վրայ Մօն-Պլան կամուրջին մօտը կառուցուած է ինչ որ կը կոչուի «Ազգային Յիշատակարան», շատ խորհրդաւոր, շատ սիրուն պղնձեայ յիշատակարան մը. Երկու կանայք, մին Հելվետիա՝ բարձրահասակ, կորովի, ջղուտ, փորձառու ու անդորր դէմքով. միւսն Ժընեւ՝ մանկամարդ, գեղանի, աշխոյժ հայեացքով։ Երկուքն ալ որձաքարէ բարձրադիր պատուանդանի մը վրայ կանգնած կ'ընդգրկեն զիրար ուժգին, և գոգցես կենդանի բարբառով կ'ուխտեն սիրել զմիմեանս յարիլ միմեանց ընդ միշտ։

Նոյն յիշատակարանին մօտը կը տարածուի հասարակաց հովասուն պարտէզ մը, որոյ հրապոյրները կը բազմապատկին յաճախ զինուորական երաժշտութեամբ։ Գիշերն այդ պարտէզն ամբոխին մէջ խառնուած էինք ունկն դնելու համար այդ երաժշտութեան, երբ եկան մեզ գտան մեր հայ բարեկամներն, որք այդ օրը մօտակայ լեռ մը գնացած էին և ճաշակած իւրեանց ձեռամբն իսկ պատրաստուած հայրենեաց [illegible] ու [illegible]. և ի վերադարձին միայն մեր ժամանումն իմացած։ Այնուհետեւ կազմեցինք հայկական զուարթ խմբակ մը, և ի միասին թափառեցանք, զուարճացանք քաղաքին մէջն ու դուրսը։

Օր մը բոլորս ի միասին գնացինք ի Ֆեռնէյ, ֆրանսական գիւղակ մը Ժընեւէն միայն չորս ու կէս մղոն հեռի. ուր բնակած էր երբեմն Վօլթէր, և որոյ ինքն կրնայ կոչուիլ հիմնադիրն։ Ինքն գնած էր հոն ընդարձակ գետին մը, գաղթականութիւն մը հաստատած, գործարան մը հիմնած, և իրեն ի բնակութիւն դղեակ մը կառուցած, որ դեռ կը մնայ կանգուն, և ուր կը պահուին իւր բազմաթիւ յիշատակներն։ Սուրբի մը տօնախըմբութեան օրն ըլլալ պատահեցաւ այդ, և Վօլթէրի դղեակն ի յարգանս այդ տօնին գոց պահուած ըլլալով՝ չկրցինք այցելել զայն. բայց տեսանք գոնէ զայն շրջապատող ընդարձակ գեղատեսիլ պարտէզն։ Եւ ո՛րքան հաճելի էր մեր այդ փոքրիկ ճամբորդութիւնն այդ օրը, զուարթ օդ, զուարթ ընկերութիւն, օմնիպիւսին վերնայարկը գրեթէ ամբողջովին մեք հայքս էինք գրաւած, զուարթ ու զարդարուն բնութիւն, լայն ու հարթ ճանապարհ գեղեցիկ պարտէզներով, գեղեցիկ շէնքերով երկուստեք, զանազան հրապոյրներով տեսարաններ հոս հոն։ Աննման են արդարեւ Ժընեւի շրջակայ վայրից գեղեցկութիւնքն, ազգի ազգի ոճերով չքեղ ամարանոցներ, սրուրակներ, դարաստաններ, լճի ու լեռանց մօտաւոր ու հեռաւոր տեսարաններ։

Գիշեր մ'ալ նուագահանդէսի մը ներկայ է սոյն Հայկական խմբակն Պաստիոնի պարտիզին մէջ։ Արեւելեան կտոր մը կընուագէ երաժշտաց ստուար ու ճարտար խումբն. կը զարթնուն մեր հայրենասիրական զգացումներն, և մեր հաւանութեան աղաղակներն կրկնել կուտան նոյն եղանակն։

Այն տեղն ուր կ'ախորժէի յաճախել, Ռուսոյի կղզեակն էր Ռօնի բերանին մօտ, ուր կը բարձրանայ այդ մեծահռչակ հեղինակին արձանն։ Պղնձէ արձան մ'է այս ալ. Ժ. Ժ. Ռուսօ նստած է բարձր աթոռի մը վրայ լուրջ ու մտախոհ դէմքով գրիչ ի ձեռին, և իւր գործերն, բազմաթիւ ստուար հատորներ, իւր մօտ միմեանց վրայ շարուած։ Այսպէս շատ մը ծառոց ստուերին տակ՝ հանդարտութեամբ կը դիտէ լիճն ու գետն և իւր ծննդավայր քաղաքն, որոյ Աւագաց ժողովն, ի մասնաւորի Վօլթէրի նախանձոտ թելադրութեամբն, թէեւ դահճին ձեռամբ հրապարակաւ այրել տուաւ երբեմն իւր գրութիւններն իբր յանդուգն, գայթակղեցուցիչ, ամբարիշտ ևն., բայց որոյ ապագայ սերունդն հպարտութեամբ ու երախտագիտութեամբ իւր անուամբ նուիրեց քաղաքին գեղեցկագոյն մի վայրն, և իւր յիշատակն յաւերժացնելու համար կանգնեց իւր ճարտարագոյն մի արձանն։ Ժամագործի մը որդին էր տաղանդաւորն Ռուսօ, եւ այն տունն ուր ծնած է, դեռ կը պահուի խնամով։

ԱՐՓ. Տ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Ֆրանսական Հանրապետութեան նախագահ Պ. Գառնօ այս օրերս այցելեց ի Սէն-Մանտէ կոյրերու հաստատութիւնը, Վարժարան Պայլի։

Այդ Պայլի Վարժարանը Սէնի նահանգին ամէնէն հետաքրքրաշարժ հաստատութիւններէն մին է։ 1883ին, երբ Պ. Բէֆօ հաստատեց զայն ի հաշիւ աշխատաւոր մատաղատի կոյրերու նպաստամատոյց Ընկերութեան, երկու աշակերտ ունէր։ Շատ համեստ սկզբնաւորութիւն մը ունեցաւ։ Ընկերութեան յայտագիրն էր կոյր տղաքներն հաւաքել վեց տարեկանէն սկսեալ, վարժեցնել զայնս զանազան արհեստներու, յորս կոյրը կրնայ օրապահիկ մը ճարել, և այդ աշխատութիւնն անգամ մը ապահովել յետոյ, Վարժարանին կցել արհեստանոց մը, ուր աշակերտը, գործաւոր եղած, կարենայ իր արհեստն ի գործ դնել և ապրուստը շահիլ, ընդ պաշտպանութեամբ իր նախկին վարպետներուն։

Ծրագիրը պարզ էր. այլ դրամ հարկաւոր էր ի գլուխ հանելու համար զայն, և Նպաստամատոյց Ընկերութիւնը դրամ չունէր։ Սէնի նահանգին վարչութիւնն և յետոյ Բարիզի քաղաքապետութիւնը դրամ տուին իրեն։ Վարժարանը վաթսուն աշակերտ ժողվեց։ Քիչ ետքը հարկ եղաւ Վարժարանը մեծցնել և քովը բանալ Արհեստանոցն, որ խոստացուած էր աշակերտներուն։ Այն ատեն փոխադրեցին զայն ի Սէն-Մանտէ, ուր, Նահանգին պաշտօնական Վարժարանն եղած, անցեալ ապրիլ ամսէն ի վեր հաստատուած է։

Պայլի Վարժարանը այժմ 85 աշակերտ ունի,—21 գործաւոր եւ գործաւորուհի, եւ 64 աշակերտ, մանչ և աղջիկ։ Տասն երեք տարեկան հասակին մէջ, աշակերտը գործաւոր կ'ըլլայ։ Օրը իբր վեց ժամ կ'աշխատի. օրուան մնացեալ մասը կը նուիրուի ուսման, զբօսանքի, երաժշտութեան։ Պ. Բէֆօ հաշուած է թէ օրը 27 սու շահող տղայ մը՝ ճիշդ ու ճիշդ կը հանէ իր սնուցման եւ բնակութեան ծախքն ու ա՛լ բնաւ բեռ մը չըլլար Պետութեան։ Ոմանք ադկից աւելի կը շահին, ամէնքն ալ քիչ ատենէն այդչափ շահու պիտի հասնին առանց դժուարութեան։ «Իսկ երբ ձեր պատանիները չափահաս մարդի՞կ ըլլան, կը հարցնէր Պ. Գառնօ վարժարանին տնօրէնին։—Պիտի ամուսնացնենք զայնս, Տէր Նախագահ,» կը պատասխանէր տնօրէնը։

* *

Հանրապետութեան Նախագահը, մէկ քանի ուղեկիցներու հետ, անմիջապէս գընաց մարմնամարզի վայրագաւիթն, ուր իրեն կ'սպասէին աշակերտները, Վարժարանին կապոյտ համազգեստն հագած, և վայելչապէս զարդարուած դարեւանդակի մը վրայ համախմբուած։ «Աչքաբաց» եւ կոյր վարժուհիները կը շրջապատէին իրենց աշակերտները։

Կոյր տղայ մը Նախագահն ընդունեց պզտիկ ատենախօսութեամբ մը զոր կարդաց՝ արագօրէն իր մատներն անցունելով պզտիկ ծակերով ծակծկուած թերթերու վրայէն, Պայլի հնարած գրութեան համեմատ։ Ապա այցելուները գացին ընդարձակ սրահ մը, ուր բոլոր պզտիկ աշակերտները խմբերգ մը երգեցին սքանչելի կերպիւ եւ դաշնամուրի ու երգեհոնի վրայ զանազան նուագներ եղանակեցին։ Յետոյ ձեռքի աշխատութեամբք պարապեցան, աղջիկները ասեղնագործութեամբ և մարգարիտներ հիւսելով, մանչերը գորգեր, աթոռներ եւ կողովներ շինելով։ Այս աշխատութիւնները կը կատարեն մեծ ճարտարութեամբ, եւ թէեւ ամէնէն տարէցներն հազիւ 13-14 տարեկան կան, անոնցմէ ոմանք արդէն 1·50 էն 2 ֆրանք կը շահին օրը։ Այս պզտիկ գումարները կը թեթեւցնեն հաստատութեան ծախքը։ Մնաց որ, պաշտօնէից թիւը շատ փոքր է, որովհետեւ աշակերտներն իրենք կը պատրաստեն իրենց անկողինները, կը կարկտեն հագուստնին եւ վարժուհիներուն կ'օգնեն առտնին ամեն աշխատութեանց մէջ։

Մարմնամարզը կայ յայտագրին մէջ։ Յիսուն վաթսուն տղայ, հինգ վեց կարգ շարուած, զինուորական ճշդութեամբ ի գործ կը դնեն բոլոր հակումները, «ոտ» և մինչեւ իսկ զաւազանի փորձերն որք սովորական են զօրանոցներուն մէջ։ Ոչ մէկ վարանում, ոչ մէկ սխալ։ Մարդու ճիգ մը կ'ընէ յիշելու համար թէ կոյրերու դիմաց կը գտնուի, երբ կը տեսնէ շարժմանց այդ ճշգրտութիւնը և դիւրաթեքութիւնը։

Պ. Բէֆօ կը բացատրէ թէ այս բոլոր արդիւնքները ձեռք կը բերուին միմիայն քաղցրութեամբ և խրատներով. այս պզտիկ մանչերն ու աղջիկները՝ զգայնիկ ծայրեան փափկութիւնն ունին. իրենց տրուած միակ պատիժն է ըսել թէ երեսի վրայ պիտի թողուն զիրենք. այս միակ խօսքը կը սարսափեցնէ զիրենք։ Արդարև տեսնելով թէ այդ տղաքներն ի՛նչ փայփայանքներով կը շրջապատեն իրենց տընօրէնը, կարելի է գուշակել թէ ո՛րչափ սիրատենչ են. անոր ձեռուըները կը համբուրեն և ճիտը կը պլլուին՝ սրտաշարժ ընտանութեամբ։

Պ. Գառնօ ամէն բան տեսնել ուզեց,—կարդալ, գրել, թուաբանութեան խնդիրներ, պատմութեան եւ աշխարհագրութեան նախագիտելիք, աշխարհացոյց տախտակներու ընթերցում,—և սքանչացած մնաց իր տեսածներուն վրայ։

Ճաշի ժամն հնչած էր։ Մինչեւ տղաքներն [illegible] կը դիմէին դէպի ճաշարանը, իւրաքանչիւր ոք իր տեղը գտնելով առանց սխալի եւ վարանման, Պ. Գառնօ, խնդակցական քանի մը ջերմ խօսքեր ուղղելէ յետոյ Պ. Բէֆօյի, կը մեկնէր Վարժարանէն, ողջունուելով համակիր ամբոխէ մը զոր անդ հրապուրած էր նախագահական այցելութեան լուրը։

* *

«Բայց մենք քանի մը հոգի էինք որ դեռ չէինք ուզեր մեկնիլ», կ'ըսէ Ֆիկարոյի խմբագիրն ուսկից կը քաղենք այս տեղեկութիւնները։ «Ճաշին վերջանալուն սպասեցէք, ըսած էր մեզ Պ. Մարսուլան, զուարճալի բան մը ցոյց պիտի տամ ձեզ։» Գնաց տասներկու տարեկան աղջիկ մը բերաւ եւ զայն առաջնորդ տալով մեզ, «Ննջարանը ցոյց տուր այս պարոններուն, աղջիկս,» ըսաւ։ Եւ ահա աղջիկը ճամբայ ելաւ, մեզ առաջնորդելով սրահներէն, նրբանցքներէն, սանդուղներէն, բարձրաձայն նշանակելով իր վարժարանին կատարեալ տեղագրութիւնն, առանց մէկ սխալի։

«Ուրիշ անակնկալ մը կ'սպասէր մեզ վայրագաւիթն մէջ։

«Սէնի նահանգային խորհրդոյն անդամներէն մին անդ բերած էր տղայ մը և տարած այն հետաքրքրաշարժ աշխարհացոյցներէն միոյն առջեւ, ուր գամեր, պտուտակներ, դուրս ցցուած և ներս քաշուած մասեր, աստղեր, գնդիկներ, իրենց մասնաւոր նշանակութիւնն ունին, և ուր տղուն ձեռքը կը պտըտի առանց ճգանց, ճանչնալով իւրաքանչիւր կէտ։

«Կը պատրաստուէինք տղուն հարցաքննել, երբ գնդիկներէն մին գետին ինկաւ։ Առանց վարանելու, տղան ծռեցաւ, ձեռքը տարածեց, գնդիկն առաւ, և բութամատովը զննելով զայն, «Սպանիոյ մէկ նաւահանգիստն է այս, պարոն,» ըսաւ, ներկայացնելով զայն խորհրդականին։

«Աշխարհացոյցին նայեցանք. Պիլպաօի գնդիկն հոն չէր։ Բնաւ չպիտի մոռնամ ներկայներուն ապշած դէմքն և սիրուն հանդարտ գլուխն պզտիկ կոյրին, որ քաղցրութեամբ կը ժպտէր մեզ, աչքերը կիսախուփ, իր «Սպանիոյ Նաւահանգիստն» ի ձեռին։»

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՍԻՄՈՆ ԳԱՓԱՄԱՃԵԱՆ
ՀԱՒԱՔԱԾՈՅ
ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՑ
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՑ

Պէրպէրեան տպարանէն ի լոյս ընծայուած սոյն դասագիրք կը պարունակէ ազգային և օտար հեղինակաց գեղեցիկ գրուածներ, մեծաւ մասամբ անտիպ, գրագիտական գլխաւոր կանոններ, հակիրճ կենսագրութիւններ, և այլն, և այլն, այնպէս որ կրնայ ըսուիլ թէ հայ մանկուոյն մտաւոր զարգացման գերեզանցապէս կը նպաստէ սոյն մատենիկ։

Կը գտնուի բոլոր հայ գրավաճառաց քով, Գին 7½ դահեկան։ Կեդրոնատեղին է Բ. Քօզաճեանի կեդրոնական գրատունը, Կ. Պոլիս, Պահճէ-Գաբու, Թիւ 56։ 407 1—5

Աբիկեան Միհրան էֆէնտիի յօրինած Թուրքերէնէ Հայերէն-Գաղիերէն ընդարձակ բառարանի 57րդ տետրն հրատարակուեցաւ որ կը հասնի ՃՆԷՔ բառը։

ՏՕՔԹՕՐ Ս. ԱՐԱՊԵԱՆ
Վկայեալ Բարիզու Բժշկական Համալսարանէն

Կը դարմանէ Ներքին և արտաքին ամեն տեսակ հիւանդութիւններ։

Մասնաւոր խորհրդակցութիւնք սրտի և կուրծքի հիւանդութեանց համար։

Կը գտնուի կամուրջի գլուխ Պիւյիւքեան եղբարց դեղարանն երկուշաբթի եւ շաբաթ օրերը և Սամաթիա Սթասիոնի մօտ Մավաճեանց տունը։ 351 7—20

ՏՕՔԹ. Ա. ՔՕՍԱՆՍ ՏԸ ԲԱՅԹԸՐ

Բժիշկ, վիրաբոյժ և մանկաբարձ, վկայեալ Ամսդերտամի համալսարանէն, հաստատուած է ի Բերա, Եէնի-Չարշը փողոց, Թիւ 80։ Հիւանդները կ'ընդունի միջօրէի ժամ 1 էն 2, ըստ Եւրոպացւոց. երեքշաբթի և ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ հիւանդները։ 54

ԼԱ ՆԻՒ-ԵՈՐՔ
ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿ.

Ընկերութեան գրասենեակները փոխադրուած են ի Մաքրի խան, Թիւ 2, Վոյվոտա, Ղալաթիա (Լօրանտօ խանին քով)։

Ամեն տեղեկութեանց համար դիմել առ. գործակալ Պ. Ժ. Ժ. Գասպէլի 235 12—12

ՍԻՐՈՒՆ ՄՕՏԻՒ ՁԿԱՆ ՕՃԱՌԱԿ
Նշանթաշ, Կ. Պոլիս, 13 Փետ. 1888

Պարոնայք Սփոդ և Ըսոն,

Կը յայտնեմ որ պաշտօնական [illegible] չեմ փորձել ընել, այլ համեմատ ուրիշներու փորձերուն և այն բժշկաց որոց պաշտօնն յանձնեցի փորձել զայն մեր հիւանդանոցիս մէջ, կը յայտարարեմ որ ձեր Մօտիւ ձկան իւղը, իբր այդ տեսակին մէջ գերազանց ճանչուելով և մաքուր ըլլալով, կը համապատասխանէ այն յատկութեանց [illegible] ի վաղուց անոր [illegible], մասնաւորապէս [illegible]։

ՏՐ. Ս. Ս. ՄԱՎՐՈՅԵՆԻ ՓԱՇԱ
Բժիշկ Վ. ՎՍ. Սուլթանին

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
ՏՊԱՐԱՆ Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

Պատիւ ունիմ ծանուցանել մեր բազմաթիւ յաճախորդաց
եւ արգոյ հասարակութեան թէ կառուցած եմ նոր եւ
ընդարձակ տպարան մը 'ի Սուլթան Համամ փողոց, թիւ 14
թէ տպագրութեան եւ թէ վիմագրութեան, նոր ամեն կազ-
մած տպագրական տառերով եւ ամեն տեսակ կատարելա-
գործեալ մեքենաներով, զորս նոր բերել տուած եմ, եւ
որով կարող եմ պատրաստել տպագրական եւ վիմա-
գրական ամեն տեսակ գործ՝ [illegible] արտաքինը
ըստ վերջին կատարելութեան եւ [illegible]
թէ տպագրութեան եւ թէ [illegible]
ամեն գործառնութեանց համար

Դիմել առ
Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ

Սուլթան-համամ փողոց
թիւ 14

ԲԱՑ
Rákoczy
ԵԱՆՈՍ

Իբր ապահով առողջարար ԼՈՒԾՈՂԱԿԱՆ միջոց, յանձնարարեալ նշանաւոր բժիշկներէ կոլէ որովայնի հիւանդութեանց, արեան կուտակման (engorgement) և արիւնքերթական, լերդի երիկամանց և խոլլայնի հիւանդութեանց համար, Նաեւ ջերմի, յօդացաւութեան, մորթի բորբոքման, պնդութեան ևն.

Կը ծախուի ամեն դեղարաններու և դեղավաճառաց քով։ 358 3—12

Հասցէ. ԵՂԲԱՐՔ ԼՕՉՐ Ի ՊՈՒՏԱՓԵՍԴ

ԻԼԱՆ

ԽԱԶԻՆԷԻ ԽԱՍՍԱՅԻ ՇԱՀԱՆԷ

Հաթթապ անպարը իչիւն ալընաճագ հաթթապ վէ քէօմիւրիւն միւնագասասընա պաշլանաճաղընտան թալիպ օլանլարըն բազար վէ չարշէնպիհ կիւնլէրի Խազինէի Խասսայի Շահանէյէ միւրաճաաթ իթմէլէրի իլան օլունուր։

25 մարթ 306

246 1—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Տէօրթիւնճի օրտու իչիւն Խարբութտա թէքլիֆ օլունմըշ իւզրէ ալընաճագ մարիւսսիւլ տէօրթ պին ատէտ ֆէսին պէհէյի ատէտի օն դուրուշ օն փարայա թալիպի էօհտէսինտէ [illegible] մագամը Սէրասքէրի [illegible] իլան օլունուր։

26 մարտ 1890 391
Նօ. 30 1—3

ԻԼԱՆ

ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Թիրլու գըրգըմ Եսիրնէ վէ Սէլանիկ հաստախանէլէրինին գըվէրէքըդ խափազըը էքի պին էքի հէքիմ պէր պին էքի քիլօ, [illegible] փարա։

Թիրլու գըրգըմ Եսիրնէ վէ հաստախանէլէրին գըվէրէքըդ խափազըը էքի պին էքի քիլօ, [illegible] փարա։

Ֆէս վէ Իզմիր ֆապրիգայի հիւմայունլէրինէ [illegible] ալընաճագ [illegible] թալիպ օլանլարըն [illegible] մագամը Սէրասքէրի [illegible] իլան օլունուր։

26 մարտ 1890 392
Նօ. 31 1—3

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐԹՀ ԲՐԻԹԻՇ ԷՆՏ ՄԷՐՔԸՆԹԱՅԼ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 6,515,542
ՀԱՍՈՅԹ 1888 ՏԱՐՒՈՅ 2,085,347

ՆՈՐԹՀԸՐՆ ԷՇՈՒՐԸՆՍ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի 3,000,000. ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ 3,581,000
ՀԱՍՈՅԹ 1888 ՏԱՐՒՈՅ 967,900

Ընկերութիւնքս Պոլսոյ մէջ ունեցած Միացեալ Գործակալութեան միջոցաւ հրդեհի դէմ ամէն կարգի վտանգաւոր ապահովագրութիւններ ի գործ կը դնեն չափաւոր գնով, և իրենց ցոյց տուած դրամական երաշխաւորութեամբ մեծ գումարներ ապահովագրողաց կրնան վստահաբար վիրենք ներկայացնել. նաև իբր ապացոյց իրենց հաստատութեան, միայն հրդեհի ճիւղին համար մինչեւ ցարդ տուած վնասնին 17,000,000 Անգլիական Ոսկին կ'անցնի։

ԾՈՎԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՐԻԹԱՅՄ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ Անգլ. Ոսկի, 500,000 ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄ Անգլ. Ոսկի 102,345

Ընկերութիւնս կ'ապահովագրէ շոգենաւուց և առագաստանաւուց մէջի ապրանքներն և դրամածրարներն խիստ օգտակար պայմանաւ։ Գնոց և այլոց վրայ տեղեկութիւն առնուլ ուզողք կը հրաւիրուին դիմել Ղալաթիա Գոմիսիօն խանի անկիւնն որ կաթէ կամրջին վրայ նայող սենեակն, առ **ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈԲԵԱՆ** Գործակալ Կ. Պոլսոյ վերոյիշեալ երեք Ընկերութեանց

ԺՈՐԺ ԷՖԹԻՄԻԱՏԻՍ

ՄԵԾ ՄԹԵՐԱՆՈՑ ՀՈՎԱՆՈՑԻ

Ի Պոլիս Աշըր Էֆէնտի խանի տակ Թիւ 17
Եւ մասնաճիւղն ի Մեծ շուկայ, Նուրի Օսմանիյէ
Ճատտէսի Թիւ 32։

Կը խնդրուի արգոյ հասարակութենէն ու և է հովանոց չգնել առանց նախապէս այցելելու այս մթերանոցն։ Այդ մթերանոցի տէրն, Եւրոպիոյ ամենէն նշանաւոր գործարանաց հետ պայմանագրութիւն կնքած է և գործարանաց հաշուոյն անհաւատալի աժան գներով պիտի վաճառէ ամառուան համար թէ՛ արանց և թէ կանանց յատուկ 10000 հովանոցներ։ Այդ մթերանոցին մէջ կը գտնուին նաև արանց ու կանանց համար ֆէլ տ'էքոս Ֆանէլաներ սպիտակ ու գունաւոր թաշկինակներ, գուլպաներ, սեղանի սպասներ, փոկապներ և այլն, որք որոշեալ գներով կը վաճառուին թէ՛ փոքր և թէ՛ մեծ քանակութեամբ։ Ապրանաց տեսակին ու աժանութեան վրայ գաղափար մը ունենալու համար հարկ է անգամ մը այցելել այդ մթերանոցը։ 405

L'ԱՎԸՆԻՐ ՏԷ ՖԱՄԻՅԼ — L'AVENIR DES FAMILLES

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼԽՈՑ
ԿԸ ԳՈՐԾԷ
ԸՆԴ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՄԲ ԳԱՂԻԱՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ԿԵԴՐՈՆԱՏԵՂԻՆ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
61, ՌԸՓԻՒՊԼԻՔ ՓՈՂՈՑ, ԼԻՈՆ 61 (ՖՐԱՆՍԱ)

ԱՊԱՀՈՎԱԳՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՔ	ՄԻՆՉԵՒ ՑԱՅՍՕՐ ԵՂԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ
80,000,000 Ֆրանք	1,500,000 Ֆրանք

Լ'ԱՎԸՆԻՐ ՏԷ ՖԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆ, որ հաստատուած է նպաստելու համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մ'ունեցած է։ Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերակազմել դրամագլուխն։

Ընկերութեան գործառնութիւնք բազմադիմի են, ինչպէս շարժական տուրքից և փոխ տրուած դրամագլխոց ապահովագրութիւն, կորուսեալ դրամագլխոյ մը վերակազմութիւն, Երաշխաւորութիւնք և Գլխաւճարք՝ փոխառութեանց և ճարտարարուեստից և վաճառականութեան մէջ գործածուած դրամագլխոց, մանկանց համար օժիտք, հանգստեան մասուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն։ Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1 էն։

Տեղեկութեանց և բաժանորդագրութեան համար դիմել առ Պետրոս Էֆէնտի Անպարճեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Թաշ խան, Թիւ 40 Պահչէ Գաբու, Պոլիս։ 42

ՀԱԶԻ ՇՆՉԱՐԳԵԼՈՒԹԵԱՆ, ՊՐՈՆՇԻԴԻ, ՀԱՐԲՈՒԽԻ, ՑՐՏԱՌՈՒԹԵԱՆ ԵՒ ՁԱՅՆԻ ԿԵՐԿԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

POWELL'S BALSAM OF ANISEED.
TRADE MARK.

ՇՆՉԱՓՈՂԻ ԵՒ ԽՈՉԱՓՈՂԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ դէմ իբր ապահով դարման այս դեղին վայելած համբաւը միշտ կը հաստատուի այն բազմաթիւ նամակներով զորս Պ. Բօուէլ կ'ընդունի անոնցմէ որք գործածած և ճանչցած են նորա յատկութիւնները։

«Անգլիոյ Թագուհւոյն ՆԷԴԼԻ Թնդանօթակրոյն վրայ, ի Ռուիք, ըՍկովտիա.

«Սիրելի պարոն, Ըստ որում կը նեղուէի յամառ հազէ մը որ գիշերը կ'արգելուր ինծ քնանալ և ցերեկը հանգիստ անցունել, Վսեմ. կոմս Քարթնէսյան ձնորակց ինծ գործածել ձեր անզուգական բալասանէն անխոնի հատիկներով և կրնամ հաւաստել ձեզ թէ առաջին գործածութենէն իսկ զգալի բարւոքում կրեցի, առանց իսկ պէտք ունենալու գործերս դադրեցնելու, և առաջին փոքր սրուակը բոլորովին բուժեց զիս։ Ուստի անոր ազդեցութեան վրայ ունեցած մեծ վստահութեամբս կը յանձնարարեմ զայն այլոց. (Ստր.) Վ. ԼԻՆԶԻԼ, Նէդլի Թնդանօթակրէն.»

Կը վաճառուի ամէն դեղատանց և արտօնեալ դեղերու վաճառականաց քով, շիշը 1 շիլին 1/2 բէնսի, 2 շիլին 3 բէնսի և 11 շիլինի։—Պատրաստեալ ձեռամբ ԹՈՄԱՍ ՊՕՈՒԷԼԻ, 4, Ալպիոն Բալէյս, Պլաքֆրիէրս Ռօտ, Լոնտոն։

Մեծաքանակ և փոքրաքանակ կը վաճառուի Թուրքիոյ և Պուլկարիոյ ներկայացուցչին քով.

64 Մ. ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ

Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վոյվոտա, պահականոցին քով, կայարան Թրամուէյից, 95 և 67

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տոքթոր Այէրի ջերմային հիւանդութեանց այս դեղն՝ որ անխառն բաղադրութիւն մի է զուտ բուսեղինաց, է գտանահամ և ապահով [illegible] ամէն տեսակ Փիզիգական [illegible], որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու ջերմոտ կլիմայից վատ ու ապականեալ օդերէն, որոց օգտակարութիւնը և [illegible] յատկութիւնը երաշխաւորեալ է նորա անհամար արդեանցը առողջ գիտութեամբն. Այս Փիզիգական [illegible] յառաջ կուգան օդին մէջ լողացող թունաւոր անըմբռնելի նիւթոց միջոցաւ, որք թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան թունաւորումն, որոց այս անուններն են [illegible] ուած է. ջերմն և սարսուռ, տաք ու ն ջերմ, պարբերական ջերմն, ընդհատեալ ջերմն, մաղձային տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատահեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտը ապականեալ է թունաւորեալ է ճահիճներէ կամ ճախճախուտ վայրերէ բուրեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և ականներու ծակտիքներէն ելած թունաւոր կազերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղն կը ջնջէ այս թունաւոր նիւթոց կամ կազերու ազդեցութիւնը և զայս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւնն առողջութեան անվտանգ և անվնաս է և օգտաւէտ, մինչ [illegible] տրուած հրահանգին համեմատ գործածուի։ Կը ծախուի Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կօսսանց նաւալոյս։ 151

L'ԷՍՓԷՐԱՆՍ L'ESPERANCE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

Արտօնեալ Դրամագլուխ	Ֆր.	10,000,000
Ստորագրեալ »	»	1,000,000
Վճարեալ	»	864,000

Ընկերութիւնս կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի ամէն տեսակ կալուածներ, կարասիք, մթերանոցներու և վաճառատանց մէջ գտնուած ապրանքներ՝ խիստ դիւրամատչելի գներով և ամենաշահաւոր պայմաններով։

Ընկերութիւնս մեծագումար գործեր կարենալ ապահովագրելու համար միացած է Եւրոպական չորս կարեւոր ընկերութեանց հետ՝ որոց Դրամագլուխը կը հասնի աւելի քան 16,000,000 Ֆրանքի։

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ի դրասենեակս Ընդհանուր Գործակալութեան, ի Պոլիս, Պահչէ Գաբու, Ճէլալ պէյ խանի ճիշտ դէմ Թիւ 21-22։ Ընդհանուր Գործակալք բովանդակ Թուրքիոյ

320 ՍԱՀԱԿ ԳԱՑԻԹ և ԸՆԿ.

NUBIAN
BLACKING
Produces a
POLISH
without
Brushing
Equal to
PATENT
LEATHER
On BOOTS, SHOES
And
LEATHER GOODS
NUBIAN
IS WATERPROOF.

ՆՈՒՊԻԱԿԱՆ ՆԵՐԿ

Խիստ յարմար է ներկելու համար կօշիկներն որք առաջին անգամէն կը փայլին, առանց խոզանակելու պէտք ունենալու։ Այս փայլն, որ նշանաւոր պայծառութիւն մ'ունի, ամբողջ շաբաթ մը կը տևէ։ Կօշիկներն անթափանցելի կ'ըլլան ջուրի և խոնաւութեան։ Ցիսմը կամ ուրիշ աղտեղութիւններ դիւրաւ կը վերցուին թրջած լաթով մը, առանց փճացնելու ներկին փայլը կամ գոյնը։

Այս ներկը կը յարմարի արանց և կանանց ամէն տեսակ կօշիկներու։ Կարելի է գործածել զայն նորոգելու համար ճամբորդութեան կաշեամանները։

Գործածման եղանակ. Ներկելի տարածքը խնամով սրբել, այնպէս որ հին ներկէն հետք չմնայ։ Ապա փայլուն հեղուկէն բսել, կամ սպունգի տարրով մը կամ վրձինով։ Թրջուած մասերն այնքան ինքնին կը չորնայ։

Զգուշանալ կեղծերէն.

Ընդհանուր կեդրոնատեղին է ԷՏՄՈՒՆՏ ԳԱՐՈՒԱՆԱ, Անգլիական Ընդհանուր մթերանոց, Վոյվոտա, Պահականոցին քով, կայարան Ղալաթիա-Շիշլիի Թրամուէյից, Թիւ 95 և 97, Ղալաթիա։ 7

ԼԱ ՌՈՒԱՆԷԶ
LA ROUENNAISE

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՀԻՄՆԵԱԼ Ի 1837

Կեդրոնատեղի՝ 18, Սէն-Մառք փողոց, Բարիզ

Դրամագլուխ, 4,000,000, Վճարեալ վնասներն իբր 30,000,000

Աւելի ընդարձակ տեղեկութեանց համար դիմել ի դրասենեակս ընդհանուր գործակալութեան, Ղալաթիա, Մահմուտիէ փողոց, Թիւ 2, Ճէրէմեան խան, Գասմոտդի Ռանգոյլին դիմաց։

Ընդհանուր գործակալք բովանդակ Թուրքիոյ և Յունաստանի
166 ՍԻՄՈՆ ՔԱՑՍԸՐԼԵԱՆ և ԸՆԿ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ՍՐԹԵՒԵՒԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷ

Սկսեալ ի 3 Հոկտեմբեր (Ն. Տ.) 1889, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	6	8	10	52	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	36	38	40	42	44				
	Առաւօտ											Իրիկուն													
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 30	7 —	7 30	7 50	8 30	9 —	9 30	10 —	10 30	11 30	12 ...	1 30	2 ...	2 30	3 ...	4 —	4 30	5 ...	5 30	6 —	6 30	...	...	...	...
Գում-գաբու	6 39	7 9	7 39	8 8	8 39	9 9	9 39	10 9	10 39	11 39	12 13	1 39	2 8	2 39	3 9	4 9	4 39	5 9	5 39	6 9	6 39	...	...	...	...
Ենի-գաբու	6 43	7 13	7 43	...	8 43	9 13	9 3	10 13	10 43	11 43	12 17	1 43	2 12	2 43	3 13	4 13	4 43	5 13	5 43	6 13	6 43	...	...	...	...
Տաւուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 49	7 19	7 48	...	8 49	9 18	9 49	10 19	10 49	11 48	12 22	1 49	2 17	2 49	3 18	4 19	4 49	5 19	5 49	6 19	6 49	...	...	...	...
Եէտի-գուլէ	6 54	7 23	8 1	8 22	8 54	9 21	9 53	10 23	10 53	11 54	12 25	1 54	2 20	2 53	3 22	4 24	4 54	5 23	5 55	6 25	6 55	...	...	...	...
Մագրիգիւղ	7 9	7 34	8 12	8 39	9 6	...	10 4	10 34	11 6	12 6	— ...	2 6	...	3 4	3 36	4 34	5 6	5 34	6 8	6 36	7 6	...	...	...	...
Այ Սթեֆանօ	7 18	...	8 21	8 52	9 15	...	...	...	11 15	12 16	— ...	2 15	...	...	3 45	...	5 15	...	6 26	...	7 15	...	...	...	...
Քիւչիւք Չէք.	...	...	...	9 3	...	...	...	...	...	12 24	— ...	...	...	...	...	...	...	...	6 34	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ-ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	5	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	35	37	39	41	51	43				
	Առաւօտ										Իրիկուն														
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք.	...	6 50	...	...	...	...	...	...	...	...	...	1 20	...	...	...	...	...	...	...	6 15	...	...	...	...	...
Այ Սթեֆանօ	6 30	7 —	...	8 —	8 30	...	9 30	...	...	11 26	...	1 30	...	2 30	...	4 ...	...	5 30	...	6 27	...	...	...	...	...
Մագրիգիւղ	6 40	7 10	7 40	8 11	8 40	...	9 40	10 10	10 40	11 37	...	1 40	...	2 40	3 10	4 10	4 40	5 40	6 10	6 42	7 5	...	...	...	...
Եէտի-գուլէ	6 52	7 22	7 51	8 23	8 52	9 26	9 54	10 24	10 52	11 51	1 25	1 53	2 25	2 54	3 21	4 23	4 53	5 54	6 24	7 —	7 16	...	...	...	...
Սամաթիա	6 56	7 26	...	8 26	8 56	9 29	9 58	10 28	10 56	11 55	1 28	1 57	2 28	2 58	3 25	4 27	4 57	5 58	6 28	...	...	...	...	...	...
Տաւուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Ենի-գաբու	7 2	7 32	...	8 32	9 2	9 34	10 4	10 34	11 2	12 1	1 34	2 3	2 34	3 4	3 31	4 33	5 3	6 4	6 34	...	...	...	...	...	...
Գում-գաբու	7 8	7 38	7 59	8 38	9 8	9 38	10 8	10 38	11 7	12 8	1 38	2 7	2 38	3 8	3 35	4 38	5 8	6 8	6 38	7 11	7 27	...	...	...	...
Կ. Պոլիս	7 16	7 46	8 7	8 46	9 16	9 46	10 16	10 46	11 15	12 16	1 46	2 15	2 46	3 16	3 43	4 46	5 16	6 16	6 46	7 20	7 35	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամէն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մաքրիգիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բանող կառախմբոց մէջ միայն կ'ընդունուին. Թիւ ... և 2 կառախումբերն ունին Ա. Բ. և Գ. կարգի վակոններ. միւս կառախումբերն ունին միայն Բ. և Գ. վակոններ։ 196

GUERISON Prompte et Certaine !

Affections des voies urinaires, Blennorrhagies, Catarrhe, Cystite, Néphrite suppurée, Mal de Bright, Coliques néphrétiques, Enthérite chronique.

CAPSULES DE SANTAL DE LACROIX

PHARMACIEN DE 1re CLASSE
LAURÉAT de la SOCIÉTÉ de PHARMACIE de Paris
Lauréat et Ex-Préparateur de l'Ecole supérieure de Paris
76, Rue du Château-d'Eau, 76
PARIS

DÉTAIL : DANS TOUTES LES PHARMACIES

Ընդհանուր մթերանոցն է ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ ԺՈՂԵՖ ՔԱՆԶՈՒՔԻ, Մեծ փողոց Բերայի, և ԴԵՂԱՐԱՆ Ա. ՄԵՐՀԱՄԵԹՃԵԱՆ, Պոլիս, Պահչէ-Գաբու, 18 64

EMULSION SCOTT

(ՍԳՈԴԻ ՕՇԱՐԱԿ)
ՄՈՐԻՒ ՁԿԱՆ ԼՈՒՏ ԻՒՂ
Իբօֆօսֆիթ տը շօլ ե սօտայով
Պատրաստեալ ձեռամբ ՍԳՈԴԻ և ԲՕՈՒՆԻ,
ի Նիւ-Եորք։

Կաթին չափ ախորժահամ է

Մորիւ ձկան հում իւղի բոլոր յատկութիւններէն զատ, իբօֆօսֆիթներու յատկութիւններն ալ ունի

Կը բուժէ Թոքախտը
Կը բուժէ անարիւնութիւնը
Կը բուժէ խոյլերը
Կը բուժէ հազը, ցրտառութիւնները
Կը բուժէ ընդհանուր տկարութիւնը
Կը բուժէ մանկանց ճղզածութիւնը

Բժիշկներէն ընդունուած է, ախորժ համ ու հոտ ունի, դիւրամարս է, և ամենէն փափուկ ստամոքսները կը տանին զայն։

Կը վաճառուի գլխաւոր դեղավաճառաց և դեղագործաց քով։
Գործակատարք ի Կ. Պոլիս. ՀԱՄՄԸՐ ԵՒ ՀԻՐՁԷԼ 81

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

Հըլ-էն Անգլիոյ, Կ. Պոլսոյ և Օտեսայի միջև

ԹՈՄԱՍՈՒԻԼՍԸՆ ՈՐԴԻՔ և ԸՆԿ.

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ալպանօ	2000	Ֆլամինկօ	1600	Բալէրմօ	3200
Անճելօ	3000	Կալիլէօ	5500	Բանտէր	1700
Ապօլլօ	5500	Կիդանօ	2200	Բլաւիօ	1500
Արկօ	1300	Կօդօ	[illegible]	Բօլօ	1000
Արիօսդօ	4000	Կրօտնօ	2200	Քուիդօ	2800
Պասանօ	3000	Հիրօ	2000	Րիալթօ	4400
Պօրօտինօ	2200	Հիտալկօ	3000	Րինալդօ	3200
Պրաւօ	2000	Հինտու	7000	Րօլլօ	3000
Պըֆֆալօ	8800	Հումպէր	1200	Րօմէօ	3500
Գէյրօ	2600	Իյակօ	[illegible]	Րօզարիօ	3500
Գալիպսօ	2500	Ճիւնօ	2300	Սալէրնօ	4000
Գամէօ	2100	Քէլօօ	2000	Սանդիակօ	8200
Գադօ	2000	Քօլլինօ	4200	Սաքֆօ	2000
Գօմօ	2700	Քօմնօ	2200	Սիլվիօ	2000
Ձիքակօ	5000	Լէօ	2000	Սօրէնտօ	4300
Գլիօ	4500	Լէրանթօ	4500	Թ. Ուիլսըն	3000
Գօլօրատօ	8400	Լիվօրնօ	3000	Թուրսօ	1200
Տիդօ	2500	Մալմօ	1500	Թօլիտօ	2800
Տօմինօ	1800	Մարէնկօ	4300	Թօրքիտօ	900
Տուրօ	4100	Մարդէլլօ	6500	Ուրպինօ	5000
Տրաքօ	2600	Միլօ	2000	Վօլթուրնօ	5000
Տայնամօ	1100	Մուրինօ	3100	Եէտօ	3600
Էլտօրատօ	3000	Նիլօ	2000	Ձէպրա	1000
Էլէքթրօ	3200	Օրլանտօ	3000	Տիֆայնըրս	200
Էրաթօ	2600	Օթէլլօ	5000	Ճըմպօ	200
Ֆալքօն	800	Օդրանօ	4500	Ձէրօ	140
Ֆիտօ	1700	Օդգօ	2000	Մօսքիթօ	120

Էճիբըլըն Մոնարք	8000
Բըրժիըն Մոնարք	8000
Լէդիըն Մոնարք	8100

Կէտտօ շոգենաւը, նաւապետ Ուստ ընդհանուր վաճառքով Հըլէն աստ հասաւ։

Ուղեւորներու համար ամէն դիւրութիւն կ'ընծայուի

Դիմել առ Ֆ. ՀԻԼՏ ԵՒ ՌԻՅՕ
Գործակալք
Թիւ 17-18, Քիւչիւք Միլլէթ
156 խան, Ղալաթիա

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ
Ն. ԲԱՔԷ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայի և Բօրիէ միջև կանոնաւորագնաց գիծ

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Արէնի որ ապրիլ 2ին Մարսիլիայէն և ապրիլ 9ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Մինկրէլի որ պիտի մեկնի ապրիլ 15ին։

Բարիզ-Լիոն-Մարսիլիոյ երկաթուղեաց ուղեւորութիւնն ի միասին առնլով,
Ա. կարգ 300 Ֆրանք
Բ. » 220 »

Ուղեւորք և արժէ ուղեւորութիւն

Նաւուղիէքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակատարն
ԹԻՄՈԹԷ ԲԸՊՈՒԼ
Թիւ 17-18 Քիւչիւք Միլլէթ
371 Մոմհանէ փողոց, Թիւ 14

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ